

ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԼՈՒԲԱԼՑՈՒՄ

Գազիկ Տեր-Չարությունյան

Այսօր քաղաքական-հասարակագիտական ոլորտի ամենահրատապ խնդիրներից է ազգային, ինքնիշխան պետությունների ապագայի հարցը: Ոմանք, հիմք ընդունելով համաշխարհային քաղաքական-իրավական-տնտեսական-տեղեկատվական ընդհանուր դաշտի ձեւավորումը եւ վերազգային ընկերությունների ու տարաբնույթ կազմակերպությունների դերակատարման աճը, գտնում են, որ գլոբալացման հետեւանքով ինքնիշխան պետությունները զարգացման հեռանկար չունեն: Համաձայն այդ մտտեցման՝ համայն մարդկությունն արդեն ոչ հեռու ապագայում կառավարվելու է վերազգային կառույցի կամ կառույցների կողմից: Այլըստ կարծում են, թե կառավարման նման համակարգը հակասում է մարդկային, ազգային էությանը եւ որ հետագա զարգացումներում ազգային-ինքնիշխան պետությունները շարունակելու են մնալ միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտը: Ակնհայտ է, որ ինքնիշխանության հարցն առանձնապես հրատապ է ոչ մեծ երկրների համար (ինչպիսին է նաեւ Հայաստանը), քանի որ ընդհանրական ռեսուրսների սակավության պատճառով նրանք առավել կախված են գլոբալ գործընթացներից:

Փոքր-ինչ պատմություն

Արեւմտյան պատմագիտական ավանդույթի համաձայն՝ ազգային, ինքնիշխան պետությունները, որպէս հանրության քաղաքական կազմակերպման հիմնական ձեւ, ի հայտ են եկել 17-րդ դարում, Եվրոպայում ծավալված Երեսնամյա պատերազմի ավարտից հետո: Այդ դարաշրջանում միմյանց դեմ հակամարտող եվրոպական հիմնական ուժերը Վեստֆալիայի (Սաքսոնիա) Օսնաբրյուկե եւ Մյունստեր քաղաքներում ընթացող բանակցությունների արդյունքում 1648թ. կնքեցին խաղաղության պայմանագիր, որը եւ նշանավորեց «ազգային պետություն» հասկացության վրա հենված միջազգային հարաբերությունների դարաշրջանի սկիզբը: Վեստֆալյան պայմանագիրն ամրագրեց նաեւ մեկ այլ իրողություն՝ Հռոմեական Սրբազան կայսրության (որը հավակնում էր լինել Եվրոպայի քաղաքական եւ ռազմական ուժի գլխավոր կենտրոնը) վերջնական վախճանը: Այսինքն՝ որոշակի վերապահումներով կարելի է պնդել, որ «Վեստֆալյան խաղաղությունը» եւ «ազգային պետություն» իրավական հասկացության ձեւավորումը այն դարաշրջանի

եվրոպական «միաբեւեռ համակարգի» փլուզման հետեւանք էին: Հետվեստֆալյան ժամանակաշրջանում ազգային պետությունները վերափոխումներ եւ զարգացումներ են ապրել: Մասնավորապես, քաղաքական գերակայության ձգտող կենտրոնների առաջացումը, որպես կանոն, նվազեցրել է ազգային պետությունների նշանակությունը: Օրինակ, Առաջին սառը պատերազմի դարաշրջանում եւ «սոցիալիստական ճամբարի», եւ «ազատ աշխարհի» երկրները, հաճախ սեփական կամքին հակառակ, իրենց իրավասությունների (հատկապես միջազգային հարաբերությունների ոլորտում) մի զգալի մասը «փոխանցել» էին համապատասխանաբար Մոսկվային եւ Վաշինգտոնին: «Սոցճամբարում» նման քաղաքական «կարգապահությունը» պահպանելու նպատակով «սովետները» հաճախ դիմում էին ռազմական ուժի, որի համար արժանանում էին համընդհանուր պախարակման: Մինչդեռ ԱՄՆ-ը, իր դաշնակիցներին վասալային կարգավիճակում պահելու համար, կիրառում էր ավելի նուրբ տեխնոլոգիաներ. դրանք ոչ միայն ավելի նպատակահարմար էին քաղաքական տեսակետից, այլեւ թույլ էին տալիս արեւմտյան գաղափարախոսներին հիմնավորված քարոզել «ազատ աշխարհի» առավելությունների մասին եւ մեղադրել «սովետներին» «ինքնիշխանության» սկզբունքները խախտելու մեջ:

Առաջին սառը պատերազմի արդյունքում փլուզվեց ոչ միայն «սոցճամբարը», այլեւ այն կենցաղային պատրանքը, թե «չարի կայսրության» տապալումը կհանգեցնի ազգային եւ իրապես ինքնիշխան պետությունների ձեւավորմանը. միաբեւեռ համակարգի հաստատումն իր հետ բերեց այլ իրողություններ: Մասնավորապես, շրջանառության մեջ դրվեց «գլոբալացում» եզրը, որը պարունակում է աշխարհաքաղաքական էքսպանսիայի հստակ բաղադրիչ: Ճիշտ է, նորանկախ պետություններից շատերը ձեռք բերեցին ինքնիշխանության ատրիբուտներ, սակայն նրանց քաղաքական կարգավիճակը քիչ բանով է տարբերվում նախկինից. թերեւս, միակ տարբերությունն այն է, որ կառավարման կենտրոնը Մոսկվայից տեղափոխվել է Վաշինգտոն կամ Բրյուսել: Նման երկրները քաղաքագիտական-վերլուծական գրականությունում ստացել են նսենացնող «proxy» անվանումը, որն իմաստային առումով, թերեւս, ճիշտ է թարգմանել որպես «վստահագրով ղեկավարվող»:

Արդի պատկերացումներն ինքնիշխանության վերաբերյալ

Հարկ է նկատել, որ վերոնշյալ իրողությունները պատմական կամ քաղաքական առումով միանգամայն բնականոն են. պատմության ողջ ընթացքում ինչ-որ երկրներ, կախված լինելով ավելի հզորներից, ունեցել

են սահմանափակ ինքնիշխանություն, իսկ երբեմն նաև՝ գաղութային կարգավիճակ: Կարելի է ասել, որ այս կամ այն պետության ինքնիշխանության չափը մշտապես պայմանավորված է եղել աշխարհաքաղաքական զարգացումներով, ինչպես նաև տվյալ ազգի հավաքական եւ հատկապես՝ նրա ընտրանու կարողություններով: Սակայն բոլոր պարագաներում «հետվեստֆալյան» դարաշրջանում ինքնիշխանության անհրաժեշտությունը, առնվազն տեսական քաղաքագիտությունում, ընդունվում էր անվերապահորեն: Մինչդեռ վերջին ժամանակներս վերլուծական գրականությունում նկատվում է «ինքնիշխանության» վերհամաստավորման հստակ միտում՝ այն համատեքստում, թե գլոբալացման գործընթացներն իմաստազրկում ու արժեզրկում են «ինքնիշխանություն» հասկացությունը:

Անշուշտ, ինտեգրման արդի գործընթացներն օբյեկտիվ բնույթ են կրում, եւ պետությունների փոխկապվածությունը քաղաքական-տնտեսական ոլորտներում իրոք աճել է: Այսօր ինքնիշխանությունը չի կարող հանդիսանալ բացարձակ կատեգորիա, եւ ցանկացած պետական միավորի համար անշահավետ է լիովին արհամարհել միջազգային նորմերը կամ միջազգային կազմակերպությունների բանաձեւերը: Սակայն այս ամենը չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի ազգային պետություններն անվանվեն «սատանայական մտահղացում», ինչպես արտահայտվել է ամերիկյան մի շատ բարձրաստիճան պաշտոնյա: Ակնհայտ է, որ նման հայեցակարգերը սպասարկում են «միաբեւեռ աշխարհակարգ» անվանումը կրող քաղաքական նախագիծը, որը ենթադրում է միայն մեկ եւ բացարձակ ինքնիշխան տերության առկայությունը:

Չակառակ դիրքերից են հանդես գալիս «բազմաբեւեռ աշխարհակարգի» կողմնակիցները: Ըստ նրանց մոտեցումների՝ ազգային պետության պահպանումը չի խոչընդոտում ինտեգրման եւ գլոբալացման գործընթացներին: Չամարվում է նաև, որ ապաստվերենացումն ընդհանուր առմամբ բացասաբար է անդրադառնում գլոբալ զարգացումների վրա, քանի որ նման միտումը կարող է աշխարհը վերածել զորանոցի կամ հանրակացարանի. հայտնի է, որ այդպիսի պայմաններում հակասությունները ձեռք են բերում առավել արմատական բնույթ: Քաղաքագետները հատկապես շեշտում են այն թեզը, որ ինքնիշխանության արժեզրկումը հանգեցնելու է ազգերի մշակութային վերասերման եւ նրանց բնատիպության/ինքնատիպության վերացման:

Որոշ տեսաբաններ, հատկապես՝ ռուսական քաղաքագիտական դպրոցի ներկայացուցիչներ, ելնելով այսպես կոչված նեոկապիտալիստական տեսություններից, գտնում են, որ ազգերի ինքնիշխանության

եւ բնատիպության պահպանումը հնարավոր է միայն համընդհանուր բարեկեցության գաղափարների եւ հասարակության բարոյական արժեքների գերակայման պարագայում, ինչը կհամընկներ գլոբալ զարգացումների վեկտորի հետ եւ կնպաստեր համամարդկային իդեալներին հասնելուն:

Չբացառելով վերոնշյալ սցենարի հնարավորությունը՝ նկատենք, որ այն ռուսական ավանդական քաղաքագիտական մշակույթի արգասիք է: Նման զարգացումն, իհարկե, առավել ցանկալին եւ օպտիմալն է: Բայց այդ սցենարն, ինչ-որ առումով, ուտոպիստական է. այն հիշեցնում է համընդհանուր բարօրության, մասնավորապես՝ կոմունիզմի հասնելու գաղափարը: Մինչդեռ արդի աշխարհի իրողություններն առայժմ լավատեսության առիթ չեն տալիս, եւ եթե նույնիսկ նման ներդաշնակ աշխարհակարգ հաստատվի, ապա՝ շատ հեռավոր ապագայում:

***Նոր սառը պատերազմը՝
ինքնիշխանության պահպանման մեխանիզմ***

Վերլուծաբանների մի ստվար հատվածի կարծիքով՝ արդի քաղաքական իրադրությունը նման է նրան, ինչ կար ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի միջեւ Առաջին սառը պատերազմի տարիներին: Սակայն այս նոր սառը պատերազմը, ի տարբերություն նախորդի, բազմաբեւեռ է: Եթե նախկինում հակամարտությունն ընթանում էր ունիվերսալ գաղափարախոսություններ կրող երկու բեւեռների միջեւ, այսօր այն ընդունել է *միջքաղաքակրթական-ազգամիջյան* բազմաբեւեռ դիմակայության բնույթ: Կարելի է ասել, որ պետությունների ինքնիշխանությունը եւ ազգերի բնատիպությունը պահպանելու ձգտումն է այն հիմնական շարժիչ ուժը, որն ընդդիմանում է միաբեւեռ աշխարհակարգին եւ ջանում է ձեւավորել բազմաբեւեռ համակարգ:

Նշենք նաեւ, որ բազմաբեւեռության ձեւավորման ներկայիս միտումները կարծես թե չեն ենթադրում «կոշտ» ռազմաքաղաքական դաշինքների ստեղծում, ինչը հնարավորություն է տալիս, մասնավորապես, Յայաստանի նման պետություններին իրագործել քաղաքական տեխնոլոգիաներ՝ ելնելով սեփական ազգային շահերից: Ջարգացումների նման տրամաբանությունը ստեղծում է գուցե ոչ այնքան հարմարավետ, սակայն օբյեկտիվ պայմաններ ինքնիշխան պետությունների զարգացման համար:

**ՔԵՆԵԲԱՆԿՊՈՐՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ.
ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Սարգիս Հարությունյան**

Ս.թ. հուլիսի 1-2-ը ամերիկյան Քենեբանկպորտ փոքրիկ քաղաքի մոտ տեղակայված Բուշ ընտանիքի «Walkers Point» ամառանոցային տանը կայացավ Բուշ—Պուտին հանդիպումը: Թեև փորձագիտական որոշ գնահատականների համաձայն, նշված հանդիպումը, իսկ ավելի ճիշտ՝ հանդիպման ձեւաչափը պարզապես չէին կարող թույլ տալ ռազմավարական կարգի պայմանավորվածություններ կայացնել երկու տերությունների միջեւ, սակայն, իրականում, հանդիպումն ուներ շրջադարձային նշանակություն ոչ միայն ռուս-ամերիկյան, այլև ողջ միջազգային հարաբերությունների առումով: Գոյություն ունեն առնվազն երեք կետեր, որոնք թույլ են տալիս կատարել նման հետեւություն.

❖ 2007թ. ամառը այն վերջին ժամանակահատվածն է, որ երկու նախագահների համար հնարավորություն է ընձեռում միջազգային նշանակության ռազմավարական որոշումներ կայացնել ու ամենակարելուրդ՝ ձեռնամուխ լինել այդ որոշումների իրականացմանը՝ հնարավորինս քիչ ենթարկվելով ներքաղաքական՝ նախընտրական գործընթացների ազդեցությանը. հայտնի է, որ 2007թ. աշնանից այդ երկրների էլիտաները մտնում են նախընտրական ակտիվ կամպանիաների փուլ՝ 2008թ. նախագահական ընտրություններին ընդառաջ,

❖ հետեւաբար, հաջորդ անգամ Մոսկվան ու Վաշինգտոնը ռազմավարական նշանակություն ունեցող հարցերի կարող են անդրադառնալ միայն 2009թ. սկզբին, երբ իշխանության դեկին կլինեն նոր նախագահներ, իսկ այդ դեպքում, երկու տերությունների համար կարելուր մի շարք հարցերի առումով՝ զալիք մեկ ու կես տարին կարող է կողմերից առնվազն մեկի համար «անդառնալի» փոփոխությունների պատճառ հանդիսանալ,

❖ Եւ վերջապես, չպետք է մոռանալ, որ Քենեբանկպորտի հանդիպումը հաջորդեց հունիսի 6-8-ը գերմանական Հայլինգենդամ քաղաքում կայացած Մեծ ութնյակի գագաթաժողովին. փաստորեն, օրակարգի իմաստով, Ատլանտիկայի ափին կայացած Բուշ—Պուտին հանդիպումը Մեծ ութնյակի շրջանակներում կայացած ռուս-ամերիկյան գագաթաժողովի տրամաբանական շարունակությունն էր:

Քենեբանկպորտի արդյունքները

Չնայած արդեն հուլիսի 7-ին ամերիկյան «CNBC» հեռուստա-ալիքին տված հարցազրույցի ժամանակ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսն ուղղակի հայտարարեց, թե Վաշինգտոնում համաձայն չեն ռուսական կողմի առաջարկություններին եւ մտադիր են շարունակել հակահրթիռային պաշտպանության (ՀՀՊ) ոլորտում Լեհաստանի ու Չեխիայի հետ ընթացող համագործակցությունը¹, իսկ հուլիսի 13-ին էլ ԱՄՆ Սենատը հատուկ ավելացում կատարեց Միացյալ Նահանգների 2008թ. պաշտպանական բյուջեի քննարկվող նախագծի մեջ՝ ամերիկյան ՀՀՊ համակարգի ստեղծումը հռչակելով որպես Վաշինգտոնի պետական քաղաքականություն, այդուհանդերձ, քենեբանկպորտյան արդյունքների ընկալման իմաստով, նախ եւ առաջ հարկ է առանձնացնել ռուսական կողմի երկու քայլերը.

❖ հուլիսի 14-ին Ռուսաստանը սառեցրեց «Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրով» (ԵՍՍՄՊ) ստանձնած պարտավորությունների կատարումը,

❖ երեք օր անց՝ հուլիսի 17-ին, Մոսկվան հերթական ու շատերի կարծիքով՝ վերջին անգամ մերժեց ամերիկա-բրիտանա-ֆրանսիական համատեղ՝ թվով երրորդ, առաջարկը Կոսովոյի խնդրի վերաբերյալ, որը հուլիսի 16-ին ներկայացվել էր ՄԱԿ Անվտանգության խորհրդի (ԱԽ) քննարկմանը:

Դեռեւս հունիսի 25-ին ռուսական «Նեզավիսիմայա գազետա»-ն գրել էր, թե Պուտինն արդեն իսկ ստորագրել է ԵՍՍՄՊ շրջանակներում Ռուսաստանի պարտավորությունների կատարումը սառեցնող հրամանագիրը: Ըստ ամենայնի, պատահական չէ, որ այն լույս աշխարհ եկավ Քենեբանկպորտի հանդիպումից անմիջապես առաջ, իսկ բուն հրամանագիրը հրապարակվեց այդ հանդիպումից հետո: Պարզ է, որ «Walkers Point»-ում նշված հանգամանքը կիրառվել է որպես ճնշամիջոց ամերիկացիների նկատմամբ:

Այդ նույն տրամաբանության ներքո պետք է դիտարկել նաեւ ռուսական կողմի մերժումը Կոսովոյի հարցի առնչությամբ: Դժվար թե սոսկ զուգահեռություն լինի այն հանգամանքը, որ ռուսական դիվանագիտությունը Կոսովոյի խնդրի վերաբերյալ² իր վերջնական դիրքորոշումը ներկայացրեց միայն Քենեբանկպորտի հանդիպումից հետո: Հիմնավորված է թվում այն տեսակետը, ըստ որի՝ Կոսովոյի խնդրում Մոսկվայի մոտեցման հիմքում նույնպես ճնշումն էր Արեւմուտքի

նկատմամբ, քանի որ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակում այսօր Ռուսաստանը չի կարող լուրջ շահեր հետապնդել Բալկաններում:

Ի տարբերություն Ռայսի հայտարարության կամ ԱՄՆ Սենատի որոշման, քենեթանկպորտյան բանակցություններից անմիջապես հետո Մոսկվայի նման քայլերը կարող են միայն վկայել, որ ռուս-ամերիկյան օրակարգում տեղ գտած ռազմավարական մի շարք հարցերի եւ առաջին հերթին ԱՄՆ ԶԶՊ համակարգի վերաբերյալ բանակցությունները, փաստորեն, սառեցված են: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ քենեթանկպորտում կողմերն, ընդհանուր առմամբ, մտել են փակուղի:

Միջազգային քաղաքականություն

Թեեւ, պայմանական ասած, ս.թ. փետրվարի 10-ին Մյունխենում Ռուսաստանի նախագահ Պուտինի ելույթից հետո ռուս-ամերիկյան նորագույն հարաբերություններում սկիզբ առած միմյանց ամենաբարձր մակարդակով մեղադրանքներ հասցնելու փուլը քենեթանկպորտում, թերեւս, ավարտվեց, իսկ հակասությունների մասով կարծես թե դեռ ամեն ինչ նոր է սկսվում, սակայն մյուս կողմից՝ ներկայացվածի համատեքստում առանձնացան երկու բավական ուշագրավ հանգամանքներ.

❖ վերջին 20 տարվա մեջ առաջին անգամ Ռուսաստանի ղեկավարությունը կարողացավ բավական լուրջ դիվանագիտական-տեղեկատվական ճնշում բանեցնել Վաշինգտոնի նկատմամբ,

❖ եւ երկրորդ, Եվրամիության ստեղծման պահից ի վեր առաջին անգամ ռուս-ամերիկյան հակասությունները դարձան Միության ներսում ընթացող քաղաքականության գործոն:

Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ քենեթանկպորտում կայացած բանակցությունների արդյունքում Ռուսաստանի նախագահն առաջարկեց ԱՄՆ ԶԶՊ համակարգի առնչությամբ առկա ռուս-ամերիկյան հակասությունների հարցը տեղափոխել «Ռուսաստան—ՆԱՏՕ» ձեւաչափ: Էլ ավելի ուշագրավ էր, որ թե՛ ՆԱՏՕ-ում եւ թե՛ անգամ Բուշ-կրտսերի վարչակազմում այդ առաջարկություններն, ընդհանուր առմամբ, դրական արձագանք գտան:

Դեռեւս փետրվարի 10-ին Պուտինի Մյունխենում ունեցած հանրահայտ ճառից հետո աչքի զարնեց այն հանգամանքը, որ գերմանական ազդեցիկ վերլուծաբանական ու լրատվական որոշ շրջանակներ մի մեծ մասով դրական գնահատեցին Ռուսաստանի նախագահի վերոհիշյալ ելույթը: Պատկերը պարզվեց, երբ ս.թ. մարտի 6-ին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը կոչ արեց օգտագործել ՆԱՏՕ-ի ձեւաչափը՝

ԱՄՆ ՀՀՊ համակարգի տեղակայման հարցի շուրջ ոռու-ամերիկյան խորհրդակցություններ կազմակերպելու համար: Այս պարագայում պետք է նաև հաշվի առնել Գերմանիայի նախորդ կանցլեր Գերհարդ Շրյոդերի³ մարտի 12-ի հայտնի հայտարարությունը, երբ վերջինս որպես վտանգավոր ու անհեթեթ բնորոշեց Լեհաստանում ու Չեխիայում ՀՀՊ համակարգի տարրեր տեղակայելու ԱՄՆ ծրագրերը:

Գերմանիայի նման մոտեցման պատճառը պարզ է: Հաշվի առնելով լեհ-գերմանական հարաբերություններում հատկապես վերջին շրջանում նկատվող հակասությունների աճը՝ ամերիկյան ռազմական ներկայության⁴ հաստատումն անուղղակիորեն կրճատելու է գերմանական ազդեցությունը Վարշավայում: Հեռանկարային առումով Բեռլինը խնդիր է տեսնում նաև ողջ Արևելյան Եվրոպայի առնչությամբ, ուր, ինչպես հայտնի է, ընթանում է ամերիկյան ռազմական համակարգերի հիմնումը: Բացի այդ, գերմանական շահերի օգտին չէ Արևմուտք—Ռուսաստան հարաբերությունների լուրջ սրացումը:

Այդ իմաստով, Վաշինգտոնի նկատմամբ ռուսական դիվանագիտության կողմից կիրառված նման կարգի ճնշումը, իրականում, պետք է ընկալել որպես ռուս-գերմանական համատեղ կամպանիա:

Մյուս կողմից՝ հիմքեր կան ենթադրելու, թե Ռուսաստանի հետ նման կարգի փոխգործակցության հարցը Բեռլինում լուծվել է ոչ առանց Փարիզի հետ որոշակի պայմանավորվածությունների: Հուլիսի 13-ին Մոսկվայում «Գազպրոմ»-ի եւ ֆրանսիական «Total» նավթագազային ընկերության միջև կնքվեց պայմանագիր, ըստ որի՝ վերջինիս բաժին հասավ Բարենցի ծովում գտնվող «Շտոկման» հայտնի գազահանքը շահագործող ընկերության 25%-ը: Հարկ է հիշեցնել, որ նախորդ երկու տարիների ընթացքում «Շտոկմանի» հարցը ռուս-ամերիկյան ու ռուս-բրիտանական օրակարգի կարելու հարցերից մեկն էր: Թեև Մոսկվան հայտարարում է, թե պատրաստ է վաճառել բաժնետոմսերի եւս 24%-ը՝ «Գազպրոմ»-ին թողնելով վերահսկիչ 51%-ը, սակայն կասկածից վեր է, որ «Total»-ի օգտին կայացրած որոշումը քաղաքական է, եւ այն, ըստ ամենայնի, պետք է գա գումարվելու գազային ոլորտում ռուս-գերմանական ռազմավարական համագործակցությանը:

Եվ վերջապես, պետք է նույն զարգացումների հետ կապել հունիսի 21-23-ը Բրյուսելում կայացած Եվրամիության գազաթափողովի ժամանակ անդամ երկրների, հատկապես՝ Գերմանիայի ու Լեհաստանի միջև երեւան եկած լուրջ հակասությունները՝ կապված ԵՄ նոր սահմանադրության հետ: Թեև հակասությունները մի մեծ մասով հաջողվեց հարթել, սակայն քիչ հավանական է, որ Մեծ ութնյակի գազաթափողովի ու Քենեբանկպորտի հանդիպման շուրջ ընթացող միջազգային զարգա-

ցունների ֆոնին ԵՄ ներսում ծագած հակասություններն ունենան լիովին առանձին տրամաբանություն՝ մանավանդ որ նույն բրյուսելյան գազաթափողովի օրերին պարզ դարձավ, որ Լեհաստանին լրջորեն աջակցում է նաև Մեծ Բրիտանիան:

Չեռելություններ

Չուլիսի 16-ին պաշտոնական Լոնդոնի որոշումը՝ երկրից դուրս հրավիրել Մեծ Բրիտանիայում ռուսական դեսպանության չորս դիվանագետներին, անշուշտ, վկայում է, որ ռուս-ամերիկյան ու ռուս-բրիտանական հարաբերությունները մտնում են առճակատման մի նոր փուլ, եւ այդ առումով քենեբանկպորտյան հանդիպման արդյունքները չէին կարող նշանակություն չունենալ: Իսկ քանի որ դա այդպես է, ապա որպես հիմնական հետեւություն պետք է առանձնացնել այն, որ առաջիկայում Ռուսաստան—ԱՄՆ/Մեծ Բրիտանիա հարաբերություններում երեւան են գալու միմյանց նկատմամբ ճնշումներ բանեցնելու նոր ուղորտներ եւ շրջաններ: Այդ իմաստով, օրինակ, հետխորհրդային տարածքում ընթացող գործընթացները պարզապես չեն կարող դուրս մնալ ընդհանուր տրամաբանությունից:

Որպես հաջորդ կարելոր հետեւություն պետք է առանձնացնել բուն եվրոպական քաղաքականության մեջ Արեւելյան Եվրոպայի գործոնի շարունակական աճը: Սակայն տրամաբանությունը, ըստ որի տեղի է ունենում այդ աճը, կարող է բավական ճակատագրական լինել ոչ միայն ԵՄ ներքին զարգացումների, այլեւ՝ ԱՄՆ—Եվրոպա—Ռուսաստան հարաբերությունների առումով:

¹ Չատկանշական է, որ Քենեբանկպորտի հանդիպման հենց հաջորդ օրը՝ հուլիսի 3-ին, Չեխիայի Ազգային անվտանգության խորհուրդը որոշում կայացրեց մայրաքաղաք Պրահայից շուրջ 90կմ հարավ-արեւմուտք գտնվող Միշով գյուղի (Պլզենի մարզ) մոտ ընկած հողատարածքը տրամադրել ամերիկյան ԶԶՊ համակարգի մասը հանդիսացող ռադարային կայանի («X-Band Radar») շինարարության համար: Իսկ հուլիսի 16-ին Լեհաստանի փոխարտգործնախարար Վիտոլդ Վաշչիկովսկին հայտարարեց, թե, ըստ երեւութին, 2008թ. փետրվարին Լեհաստանում կսկսվի ամերիկյան ԶԶՊ համակարգի մասը հանդիսացող հրթիռային («Ground Based Interceptor») կայանի շինարարությունը: Պաշտոնապես ռազմակայանի տեղը դեռ հստա-

կեցված չէ: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ հարցի վերաբերյալ ամերիկա-լեհական համապատասխան պայմանագիրը կկնքվի արդեն այս սեպտեմբերին կամ հոկտեմբերին:

2 Արեւմտյան դիվանագետների համաձայն՝ Կոսովոյի խնդրի կապակցությամբ հուլիսի 16-ին ՄԱԿ ԱԽ ներկայացված տարբերակը վերջինն է, եւ նոր փաստաթուղթ Մոսկվայի քննարկմանը չի ներկայացվելու: Ըստ այդ փաստաթղթի՝ Սերբիայի ու Կոսովոյի միջեւ առավելագույնը չորս ամիս տեւող բանակցություններից հետո, եթե չի հաջողվում փոխհամաձայնության հանգել, վերջինս մեխանիկորեն դուրս է գալիս Բելգրադի իրավասությունից՝ անցնելով Պրիշտինայում գործող Եվրամիության հատուկ գրասենյակի իրավասության ներքո՝ ըստ էության ստանալով կիսաիրավական անկախություն Սերբիայից:

3 Հիշեցնենք, որ պաշտոնավարման ժամկետի ավարտից շատ չանցած Գերհարդ Շրյոդերը ստանձնեց Ռուսաստանը Գերմանիային կապող գազամուղի կառուցմամբ զբաղվող ռուս-գերմանական համատեղ «North European Gas Pipeline Company» ընկերության բաժնետերերի խորհրդի նախագահի պաշտոնը:

4 Օրինակ, ռուս փորձագետները վստահ են, որ ՀՀՊ համակարգի տարրերին կհետեւի Պենտագոնի այլ զորամիավորումների մուտքը Լեհաստան, Չեխիա՝ այնպես, ինչպես եղավ Ռումինիայի եւ Բուլղարիայի դեպքում:

ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ Դավիթ Հովհաննիսյան

Վերջին շրջանում Իրանի միջուկային ծրագրի առնչությամբ տեղի են ունեցել բազմաթիվ կարելուր իրադարձություններ. Բաղդադում, մոտ 30-ամյա ընդմիջումից հետո, կայացել են ամերիկա-իրանական պաշտոնական բանակցություններ՝ դեսպանների մակարդակով, տեղի են ունեցել Սուլանա-Լարիջանի բանակցությունները, անց են կացվել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) ղեկավարության եւ Իրանի ներկայացուցիչների հերթական քննարկումները, Իրանի դիվանագետները եւ փորձագետները բանակցել են ռուսական կողմի հետ՝ Բուշերի ատոմակայանի վերաբերյալ, վերջապես, ԱՄՆ նախագահ Ջ.Բուշը եւ ՌԴ նախագահ Վ.Պուտինն իրենց բանակցությունների ընթացքում անդրադարձել են նաեւ Իրանին առնչվող խնդիրներին:

Այսպես. հուլիսի 11-12-ին Թեհրանում կայացան ԱԷՄԳ պատվիրակության եւ իրանական բարձրաստիճան պաշտոնյաների բանակցությունները, որոնց արդյունքները երկուստեք դրական են գնահատվել: Մասնավորապես, Իրանի Ազգային անվտանգության Գերագույն խորհրդի քարտուղարի տեղակալ Ջավադ Վաիդին տեղեկացրել է, որ կողմերը համաձայնության են եկել ժամանակացույցի հիմնական ձեւաչափերի շուրջ, համաձայն որի՝ Թեհրանը պետք է անհրաժեշտ պարզաբանումներ տա այն հարցերի վերաբերյալ, որոնք ԱԷՄԳ-ն դեռ ունի Իրանի միջուկային ծրագրի առումով: Հարցերը վերաբերում են թե՛ նախկինում իրականացված միջուկային ծրագրերին եւ թե՛ ներկայումս ծավալվող գործունեությանը: Նա նաեւ նշել է, որ այս բանակցությունները չեն առնչվում այն բանակցություններին, որոնք վարում են ԵՄ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով Գերագույն կոմիսար Խավիեր Սուլանան եւ Իրանի ԱԱԳԽ քարտուղար Ալի Լարիջանին:

ԱԷՄԳ պատվիրակության ղեկավար Օլի Հեյնոնենը նույնպես շատ լավատեսորեն է արտահայտվել՝ նշելով, որ դեռեւս չհստակեցված հարցերը կպարզաբանվեն: Նա նաեւ հայտնել է, որ այդ հարցերն առնչվում են Իրանի՝ նախորդ ժամանակաշրջանում վարած միջուկային քաղաքականության հետ, եւ կարիք կա վերականգնելու այդ գործունեության որոշ հատվածներ:

Չուլիսի 17-ին Լոնդոնում ավարտվեցին իրանական միջուկային դոսյեի վերաբերյալ վեցնյակի (ԱՄՆ, ՌԴ, Չինաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա) բանակցությունները, որոնց ընթացքում քննարկվում էր նոր պատժամիջոցների առաջարկություններ պարունակող ՄԱԿ ԱԽ երրորդ որոշման բրիտանա-ամերիկյան նախագիծը: Ինչպես հայտնում է մոսկովյան «Նեգավիսիմայա գազետա» օրաթերթը, չնայած նրան, որ այս բանակցությունների ընթացքում առաջարկված փաստաթղթի ձևակերպումները զգալիորեն մեղմացվել են, սակայն այն դժվար թե մոտ ժամանակներս ՄԱԿ ԱԽ-ում դրվի քննարկման, քանի որ, հակադրվելով ամերիկյան եւ բրիտանական ներկայացուցիչներին, վեցնյակի մյուս անդամները բարձր են գնահատել ԱԵՄԳ-ի հետ իրանական կողմի վերջին բանակցությունների արդյունքները:

Չարկ է նշել, որ ԱԵՄԳ պատվիրակության թեհրանում վարած բանակցությունները հաստատում են այն ենթադրությունները, թե Միացյալ Նահանգների եւ Իրանի միջեւ մի շարք ուղղություններով եւ տարբեր մակարդակներով տեղի են ունենում երկկողմ հետաքրքրություն ունեցող հարցերի քննարկումներ եւ կարծիքների փոխանակում, ինչը թույլ է տալիս ավելի չլարել առանց այդ էլ շիկացած մթնոլորտը:

Իրանի միջուկային ծրագրի, մասնավորապես՝ ուրանի հարստացման եւ միջուկային զենքի արտադրման տեխնոլոգիաների ձեռքբերման առումով նոր հնչեղություն են ստանում ռուս-ամերիկյան հարաբերությունները, որոնց լարվածության մակարդակը նույնիսկ ԱՄՆ ՄԵՅՆ նահանգում գտնվող Ջորջ Բուշ-ավագի ներկայությամբ տեղի ունեցած երկու նախագահների հանդիպումից հետո էլ շարունակում է մնալ բավական բարձր, իսկ որոշ հիմնահարցերի վերաբերյալ կողմերը դրսևորում են սկզբունքային անհամաձայնություն:

Ըստ ամերիկյան քաղաքագետների եւ քաղաքական գործիչների գնահատականների՝ այն երեք հարցերից, որոնք, ԱՄՆ տեսանկյունից՝ համարվում են կարեւորագույն եւ որոնց վրա կառուցվում էին ռուս-ամերիկյան հարաբերությունները՝ պայքար ահաբեկչության դեմ, համագործակցություն էներգետիկ անվտանգության ոլորտում եւ միջուկային զենքի տարածման դեմ ընդհանուր դիրքորոշում, միայն վերջինը ներկայումս կարող է գնահատվել որպես սերտ համագործակցության օրինակ: Մյուս երկու հարցերում Միացյալ Նահանգների եւ Ռուսաստանի Դաշնության շահերը, եթե նույնիսկ ուղղակիորեն չեն հակադրվում, ապա նաեւ թույլ չեն տալիս նախկինի նման փոխլրացման սկզբունքով միասնական քաղաքականություն վարել:

Սակայն նույնիսկ այս խնդրում ամերիկյան քաղաքական վերնա-

խավի մեջ չկա համաձայնություն, քանի որ Հանրապետական կուսակցության այն թեւը, որը ներկայացնում են նախագահ Ջ.Բուշը եւ փոխնախագահ Դ.Չեյնի, շարունակում է համոզված մնալ, որ Իրանը թաքցնում է միջուկային զենք ձեռք բերելու իր իրական ծրագրերը (իսկ նույն կուսակցության մի շարք ակամավոր գործիչներ եւ Դեմոկրատական կուսակցությանը պատկանող հայտնի քաղաքական դեմքեր կողմնակից են ավելի կառուցողական դիրքորոշում որդեգրելուն):

Միացյալ Նահանգների վարչակազմի դիրքորոշումը նույնպես միանշանակ չէ: Գրեթե միաժամանակ տեղի են ունենում վերը նշված բանակցությունները, նախագահներ Վ.Պուտինը եւ Ջ.Բուշը ստորագրում են միջուկային տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ համատեղ հուշագիր, իսկ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը հայտարարում է, որ չպետք է բացառել Իրանի դեմ ռազմական միջոցների կիրառումը, եւ այս ամենը տեղի է ունենում Իրանի ծովային սահմանի մոտակայքում ամերիկյան ռազմածովային ուժերի աննախադեպ կենտրոնացման պայմաններում:

Մյուս կողմից՝ ամերիկյան հեղինակավոր Միջազգային հարաբերությունների խորհուրդը հրապարակում է հայտնի դիվանագետ եւ քաղաքական վերլուծաբան Սթիվեն Սեստանովիչի ղեկավարած խմբի զեկույցը ռուս-ամերիկյան հարաբերությունների վերաբերյալ, որտեղ նշվում է, որ Ռուսաստանը, «լինելով միակ խոշոր տերությունը (ոչ թե մեծ տերությունը - Դ.Յ.), որը շարունակում է Իրանի հետ միջուկային համագործակցությունը, կարող է այդ գործունեությունը զսպող կառույցի ստեղծման գործում կենտրոնական դեր խաղալ: Նրա՝ Իրանի հետ ձեռք բերած համաձայնությունը Բուշերի ռեակտորից միջուկային վառելիքը Ռուսաստան վերադարձնելու մասին, ինչպես նաեւ Ռուսաստանում իրանական ռեակտորների համար ուրանը հարստացնելու վերաբերյալ առաջարկությունը վկայում են այս հիմնահարցում կառուցողական դեր կատարելու Մոսկվայի պատրաստակամության մասին»: Ինչպես նշվում է այդ փաստաթղթում, «Ռուսաստանը միակ պետությունն է, որը կարող է ազդեցիկ կերպով Իրանին սպառնալ միջուկային տեխնոլոգիաների ոլորտում մեկուսացմամբ, եթե վերջինս շարունակի կառուցել միջուկային վառելիքային ցիկլին պատկանող գաղտնի օբյեկտներ»:

Հեղինակների կարծիքով՝ Միացյալ Նահանգներն այս հարցին չպետք է մոտենա որպես մի հիմնախնդրի, որը կարելի է լուծել կողմնակի գործարքների եւ պարզեւատրումների միջոցով: Ձեկույցում նշվում է, որ «եթե ռուսական եւ ամերիկյան գնահատականները

համընկնեն, ապա երկու կողմի քաղաքական գործիչներն էլ հիմքեր կունենան շարունակելու այս համագործակցությունը նույնիսկ այն դեպքում, եթե այլ հարցերում լինեն տարածայնություններ: Իսկ եթե ռուսական եւ ամերիկյան քաղաքականությունը կառուցված չլինի նույն ռազմավարական գնահատականի հիման վրա, ապա Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջեւ ոչ մի գործարք չի դիմանա ժամանակի փորձությանը»:

Այս միտքն առավել արդիական է հնչում Մոսկվայի՝ Եվրոպայում սովորական սպառազինությունների պայմանագրի դրույթների կատարման դադարեցման մասին հայտարարությունից հետո: Հայտարարությունն արվել է Լեհաստանի նախագահ Կաչինսկու Վաշինգտոն ժամանելու օրը, ինչը նշանակում է, որ ՌԴ նախագահ Վ.Պուտինը շարունակում է կտրականապես դեմ լինել Լեհաստանում եւ Չեխիայում հակահրթիռային համալիրներ տեղադրելու Միացյալ Նահանգների ծրագրի իրականացմանը:

ՌԴ նախագահ Պուտինի՝ Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանի համատեղ օգտագործման հետ կապված դիվանագիտական նշանակություն ունեցող առաջարկը թույլ տվեց Կրեմլի ղեկավարությանն արդարացնել միջազգային հանրության աչքում սովորական սպառազինությունների պայմանագրից իր դուրս գալու որոշումը: Սակայն այս քայլը, ամենայն հավանականությամբ, արդեն իսկ քննարկվել էր նախագահների հանդիպման ընթացքում եւ իրական լուրջ ազդեցություն երկկողմանի հարաբերությունների մակարդակի վրա դժվար թե ունենա:

Շատ ավելի կարելու է այն, որ համաձայն մի շարք հետազոտությունների՝ առաջիկայում սպասվում է նավթի գների կտրուկ բարձրացում, ինչը կապված է ոչ միայն Իրաքի պատերազմի եւ Իրանի շուրջ իրադարձությունների, այլ նաեւ այն իրողության հետ, որ նավթի պաշարները սպառվում են օրեցօր աճող արագությամբ: Անշուշտ, նավթային պաշարներ ունեցող երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի համար այս իրավիճակը ներկայումս բավական դրական է գնահատվում, ինչը կարող է դրդել Ռուսաստանին եւ նման շահեր ունեցող այլ պետությունների ձգձգել Իրանի հետ վարվող բանակցությունները, իսկ Միացյալ Նահանգներին, որի կախումը միջինարեւելյան նավթային պաշարներից բավական մեծ է՝ ձգտել հնարավորինս արագ լուծել նավթի գների աճի վրա ազդող խնդիրները եւ նվազեցնել նման գործոնների նշանակությունը: Ընդ որում, այս հասկանալի ձգտումը ենթադրում է երկու գործելակերպ: Առաջինն այն է, որի մասին արդեն

բավական երկար պնդում են ԱՄՆ ներկայիս վարչակազմի ընդդիմախոսները՝ ուղիղ երկկողմանի բանակցությունների միջոցով կարգավորել ամերիկա-իրանական հարաբերությունները եւ աստիճանաբար դուրս բերել ամերիկյան զինուժն Իրաքից:

Մյուս գործելակերպը ենթադրում է ուժային գործողություններ Իրանի դեմ եւ Իրաքի մասնատում: Նման մշակված սցենարներ վաղուց ի վեր գոյություն ունեն եւ ժամանակ առ ժամանակ քննարկվում են ամերիկյան քաղաքական ու փորձագիտական էլիտայի տարբեր շրջանակներում: Սակայն ամեն անգամ դրանց գործադրումն առաջացնում է այնպիսի լուրջ հիմնավորումներ ունեցող առարկություններ, որ ընդհանուր գնահատականները բացասական են տրվում: Այնուամենայնիվ, ստեղծված իրավիճակում, երբ կանխորոշված է ներկայիս վարչակազմի բոլոր ազդեցիկ անդամների հեռացումը քաղաքական հարթակից, չի կարելի բացառել ուժային միջոցների այս կամ այն չափով կիրառումը:

Եվ նորից այս համատեքստում շատ մեծ կարեւորություն են ստանում ռուս-ամերիկյան հարաբերությունները. եթե հնարավոր լինի Իրանի եւ Իրաքի խնդիրների շուրջ Կրեմլի ու Սպիտակ տան միջեւ ձեւավորել փոխադարձ վստահության մթնոլորտ, ավելի սերտ եւ գործնական համագործակցություն իրականացնել ընդհանուր առմամբ միջուկային էներգիայի հիմնահարցերի եւ, մասնավորապես՝ Իրանի միջուկային ծրագրերի վերաբերյալ, Սիաոյալ Նահանգներն էլ հրաժարվի Ռուսաստանին ուղղված իր վաղուց արդեն անիմաստ դարձած պահանջներից՝ դադարեցնել Իրանի հետ միջուկային էներգիայի ոլորտում համագործակցությունը, ապա իրանա-ամերիկյան հարաբերությունների լարվածությունը կնվազի եւ հնարավոր կլինի ընդունել արդեն իսկ գոյություն ունեցող փոխզիջումային տարբերակները:

**ԱՄԵՐԻԿՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐՈՎԵՐՆԵՐԸ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ
Վահագն Ազլյան**

Կենտրոնաասիական տարածաշրջանի նկատմամբ ԱՄՆ ռազմավարական շահերի գոյության փաստն առաջին անգամ որոշակիորեն արձանագրվեց 1997թ. ապրիլին՝ Կոնգրեսին ուղղված Պետդեպարտամենտի հատուկ զեկույցի մեջ: Փաստաթղթում հստակեցվում էր, որ ԱՄՆ-ը, լինելով էներգակիրների խոշորագույն սպառողն աշխարհում, ուղղակիորեն շահագրգռված է համաշխարհային էներգետիկ պաշարների «ընդլայնման ու դիվերսիֆիկացման» գործում: Ավելին, հաստատագրվեց, որ ամերիկյան շահերն այստեղ ոչ միայն տնտեսական են իրենց բնույթով, այլև ռազմավարական, քանի որ «խնդիրն անմիջապես առնչվում է Արևմուտքի անվտանգության ամրապնդմանը»: 1998-2005թթ. ընթացքում ԱՄՆ-ը տարածաշրջանի երկրներին հատկացրեց 1 մլրդ դոլարի օգնություն. ահռելի գումար նման հեռավոր երկրների համար:

Այդուհանդերձ, Մերձկասպյան գազատար կառուցելու մասին ռուս-ղազախ-թուրքմենական համաձայնությունները (2007թ. մայիսին) չափազանց լուրջ մարտահրավեր նետեցին ԱՄՆ առարկայական շահերին: Ռուսաստանի տարածքը շրջանցող նախագծերը՝ ԵՄ-ի կողմից հովանավորվող «Nabucco» ծրագիրը, ինչպես նաև ամերիկյան վաղեմի ձգտումը՝ կառուցել անդրկասպյան գազատար Թուրքմենստանից մինչև Միջերկրական, այժմ դժվարհաղթահարելի խոչընդոտի են հանդիպում: 2008թ. կեսերին մեկնարկելիք Մերձկասպյան գազատարի կառուցումը վերջնականապես կարող է «հաստատագրել» ռուսաստանյան մենաշնորհը թուրքմենական գազային պաշարների առյուծի բաժնի նկատմամբ: Դրա հետ մեկտեղ, ռուսաստանյան ստրատեգների բազմաքայլ սխեման ենթադրում է, որ հիշյալ համաձայնությունների «ձևաչափում» կհաջողվի պահպանել ՌԴ գերակայությունը նաև ղազախական նշանակալի նավթային պաշարների արդյունահանման ու տեղափոխման գործում:

Նույնիսկ ամերիկյան վարչակազմին առավել հավատարիմ աջ տեսաբանները ստիպված են ընդունել, որ վերջին տարիներին ռուսներն այս տարածաշրջանում պարտություն չեն ճանաչում: Անկասկած,

Վաշինգտոնում առավել քան լավ են հասկանում, որ այս մեծ մրցապայքարի նոր «փուլում» կարևորը ոչ թե պայմանավորվելն է, այլ՝ իրականացնելը:

Ամերիկյան ռազմավարության հայեցակարգային հենքը

Գաղտնիք չէ, որ անգլո-սաքսոնյան ռազմավարական մտածողությանն ավանդաբար բնորոշ են *ինտերցիոն* հատկանիշներ. գործողության ընդունված բանաձևերն ու սկզբունքային աշխարհայացքային դրույթները մեծ դժվարությամբ են ենթարկվում փոխակերպման: Դեռ 1990-ական թթ. մշակված և գործնականում կիրառված ամերիկյան քաղաքականության *modus-ները* ևս բացառություն չեն այս շարքում: Այսպես, ժամանակակից ամերիկյան ռազմավարական միտքը շարունակում է հավատարիմ մնալ մոտ մեկ տասնամյակ առաջ հաստատագրված այն թեզին, ըստ որի՝ միայն համակարգային փոփոխությունների արդյունքում է հնարավոր հասնել երկարաժամկետ հիմնականատակների ապահովմանը՝ տարածաշրջանում ժողովրդավարական ընթացակարգերի, լիբերալ շուկայական հարաբերությունների արմատավորմանը: ԱՄՆ արտաքին քաղաքականության նորմատիվ օրակարգի դիտանկյունից՝ ՌԴ վարած քաղաքականության հիմնական թերություններն են. ռուսաստանյան քաղաքականությունը սկզբունքորեն միտված չէ տարածաշրջանում համակարգային փոփոխությունների իրագործմանը, մինչդեռ Մոսկվայի գլխավոր շարժառիթներն ու նպատակները Կենտրոնական Ասիայում բյուրեղանում են *status quo*-ի պահպանման անհրաժեշտության մեջ: Ըստ ամերիկյան քաղաքագետների՝ Ռուսաստանը ձգտում է առավելագույնս ապահովել իր շահերը ստեղծված *ad hoc* իրավիճակից՝ անկախ տեղական ռեժիմների երկարակյաց լինելու հեռանկարից:

Գործնական քաղաքականության հակասությունները

Պատմական փորձը փաստում է, որ ժամանակակից արտաքին քաղաքական *modus operandi*-ն ենթադրում է ռազմավարական շահերի երկու «ձևաչափերի» գոյություն՝ «տիրապետող» շահեր և «իրավիճակային» շահեր:

1997թ. ի վեր ԱՄՆ-ը ձգտում է գործնականապես համադրել այս երկու մոտեցումները՝ հրաշալի գիտակցելով, որ «տիրապետող» ամերիկակենտրոն համակարգի ստեղծումն անխուսափելիորեն պահան-

ջելու է հրաժարում, թեկուզ ժամանակավորապես, կարճաժամկետ, սակայն կոնկրետ շահերի հետապնդումից (էներգետիկ պաշարների հասանելիություն, դրանց տեղափոխման ուղիների վերահսկում, հստակ ֆինանսական շահութաբերություն): Ըստ ամենայնի, հենց դրանով էլ պայմանավորված էր ԱՄՆ «տատանողական» քաղաքականությունը՝ սատարել տարածաշրջանային որոշակի համախմբվածության (ռեգիոնալիզմ), թե՞ շեշտ դնել երկկողմանի հարաբերությունների առաջնահերթության վրա:

Բ.Քլինթոնի վարչակազմի օրոք տարածաշրջանային ինտեգրված համակարգի ստեղծման գաղափարն ակնհայտորեն գերակա էր. պաշտոնական քաղաքական դիսկուրսում, ինչպես նաև գործունեության մեջ՝ Ռուսաստանի ազդեցությունից անկախ ինտեգրատիվ նախաձեռնությունները միանգամայն դրական էին գնահատվում: Գիշտ է, ինչպես նկատում էին մի շարք մեկնաբաններ, պրագմատիկ նկատառումներից ելնելով՝ ամերիկյան կողմն առանձնակի տուրք չէր տալիս տարածաշրջանային միավորմանը, քանի որ միասնաբար կենտրոնաասիական պետություններն ի վիճակի կլինեին որոշակիորեն սակարկել ԱՄՆ-ի հետ, ինչը կբարդացներ ամերիկյան դիվանագիտության խնդիրները:

Տարածաշրջանային ռազմավարական գերակայությունները զգալիորեն փոփոխվեցին 2001թ. վերջից՝ Աֆղանստանում ձեռնարկված ռազմական գործողության արդյունքում: Ուզբեկստանի ընտրությունն՝ իբրև հանգուցային դաշնակցի, կոչված էր ծառայելու ոչ միայն Աֆղանստանում ուժային գործողությունների ապահովման ցատկահարթակի գործառույթին, այլև՝ ձևափոխելու սեփական գերնպատակների ապահովման մեթոդները: Ամերիկյան մեծածավալ ռազմական ու ֆինանսական օժանդակությունը Ուզբեկստանին և այդ հանրապետության տևական առանձնացումը մյուսներից էապես կփոխեին նախկինում տիրապետող ամերիկյան մոտեցումները: Ուժային հավասարակշռության տրամաբանությամբ կերտվող այդ համադրությունը Տաշքենդին կվերապահվեր տարածաշրջանային առաջնորդի ու առավել ազդեցիկ պետության դերակատարում: Սակայն հիշյալ պլաններին վիճակված չէր իրականանալ. 2005թ. Անդիջանի հայտնի խժոժություններից հետո ամերիկա-ուզբեկական հարաբերությունները սառեցվեցին, իսկ Ուզբեկստանը դուրս եկավ ՎՈՒՈԱՄ միավորումից՝ շուտով պաշտոնապես միանալով ՌԴ անվտանգության համակարգին (ՀԱՊԿ):

Մրցապայթարի «Երկրորդ փուլը»

2006թ. օգոստոսին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ս.Մանը հաստատեց, որ «այժմ Միացյալ Նահանգները կենտրոնանալու է Կենտրոնական Ասիայից էներգակիրների արտահանման ուղիների երկրորդ փուլի իրականացման վրա»: 2006-07թթ. ընթացքում Վաշինգտոնը, լավ ըմբռնելով Ռուսաստանի ձգտումը՝ էլ ավելի բարձրացնել տարածաշրջանում իր «դրույքաչափերը», վիթխարի քաղաքական աշխատանք տարավ տեղական էլիտաների հետ՝ տարածաշրջանային գործընթացների ուղղորդման գործում հիմնական նախաձեռնողի դերակատարությունը չկորցնելու համար: Մասնավորապես, տրոհվեց ԱՄՆ ավանդական արտաքին քաղաքական օրակարգը, որն աչքի էր ընկնում համակարգային լուծումներ գտնելու տրամաբանությամբ. առաջին եզր մղվեցին կոնկրետ հարցադրումներ՝ կապված էներգետիկ ոլորտում ամերիկյան շահերի երաշխավորման հետ:

Այնուամենայնիվ, ինչպես ամերիկյան վերլուծաբաններն են նշում, «տարածաշրջանային անվտանգության համակարգի կազմավորման մասին պնդումները ներկայումս իրատեսական չեն, իսկ Վաշինգտոնի ռազմավարական օրակարգի տարաբնույթ հավակնոտ նպատակները՝ դժվարիքազործելի»: Այս համատեքստում քիչ հավանական է թվում, որ Միացյալ Նահանգները դիմի կտրուկ քայլերի՝ ի պատասխան Ռուսաստանի ակտիվ շարժընթացի:

Ուշագրավ է, որ ռուս-թուրքմեն-ղազախական պայմանավորվածություններին հետևեցին ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաների կայծակնային այցերը Բաքու, Աստանա և Աշգաբադ: Ըստ Ս.Մանի՝ Տրանսկասպյան գազատարի կառուցման նախագիծը դեռևս խարխլված չէ, քանի որ «առկա են այլ էներգակիրներով հարուստ հանքատեղիներ»: Վերջին հանգամանքը նշանակում է, որ ԱՄՆ-ը շարունակելու է ներգրավված մնալ կասպյան էներգակիրների վերահսկման գործում: Միաժամանակ, Վաշինգտոնը մեծ ուշադրությամբ կշարունակի հետևել Ղազախստանի՝ տարածաշրջանային առաջնորդ դառնալու հեռանկարներին, և 2007թ. հուլիսի սկզբին Աստանայում գտնվող Ռ.Բաուլչերը բավական թափանցիկ ակնարկեց այդ մասին:

Վերջապես, թերևս, ամենակարևոր միտումը վերանայման փուլում գտնվող ամերիկյան ռազմավարության մեջ է: Նույն Ռ.Բաուլչերը 2007թ. սկզբին Վաշինգտոնում պաշտոնապես ազդարարեց նոր «Մեծ Կենտրոնական Ասիայի» նախաձեռնության արագացման անհրաժեշտության

մասին, որը ենթադրում է ընդլայնել ու ամրապնդել տարածաշրջանի կառուցվածքային կապերը Հարավային Ասիայի հետ, քանի որ «ԱՄՆ-ը ազդեցության ավելի զորեղ լծակներ ունի այդտեղ»: Հատկանշական է նաև այն, որ ս.թ. հուլիսին Ազգաբաղ այցելեցին Հարավարևելյան Ասիայում ամերիկյան քաղաքականության զինվորական ու քաղաքացիական պատասխանատուները (մինչ այժմ տարածաշրջանը գտնվում էր Եվրոպայում տեղաբաշխված Կենտրոնական հրամանատարության պատասխանատվության ներքո):

Անկախ նրանից, թե որքան հարատև կլինեն ԱՄՆ քաղաքականության այս նոր միտումները, ակնհայտ է, որ ամերիկյան աշխարհաքաղաքականությունը միջնաժամկետ հեռանկարում ձգտելու է որոշակի այլընտրանք-հակակշիռներ ստեղծել՝ կանխելու տարածաշրջանի միանշանակ կողմնորոշվածության կարծրացումը:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ **Արաքս Փաշայան**

Կենտրոնական Ասիայի հիմնական կրոնն իսլամն է, որն այստեղ է ներթափանցել 7-8-րդ դարերում արաբների արշավանքների ժամանակ, ինչի արդյունքում տարածաշրջանի մի զգալի հատվածը մաս է կազմել արաբական խալիֆայության: Կենտրոնական Ասիան ավանդականորեն համարվել է իսլամական մշակույթի եւ գիտության կարեւորագույն կենտրոն:

ԽՍՀՄ փլուզումից հետո Կենտրոնական Ասիայում իսլամի արմատավորումն ընթացավ տեղական պայմաններին հատուկ հանգամանքներում՝ առանձին դեպքերում կրելով միջազգային իսլամական կենտրոնների եւ տարածաշրջանային բարդ գործընթացների ազդեցությունը:

Կենտրոնական Ասիայի հանրապետություններում իսլամը ներկայացված է հիմնականում սուննի ուղղությամբ, տարածված է նաեւ շիա, ինչպես նաեւ ժողովրդական իսլամը, ինչը նկատի է առնում սուֆիական եղբայրությունների գործունեությունը:

Տարածաշրջանի բնակչության մեծ մասն իրեն համարում է մահմեդական՝ չնայած սեփական կրոնի ոչ համապարփակ իմացությանը: Հատկանշական է, որ ցեղային ավանդույթն էապես նպաստել է տեղական իսլամի գործառույթին:

Ի դեպ, այսօր Կենտրոնական Ասիայում կապված խորհրդային շրջանի կրոնական եւ ազգային քաղաքականության սահմանափակումների հետ, իսլամը հիմնականում պայմանավորում է հասարակության ավանդութային ու կենցաղային կողմերը եւ սոցիալ-քաղաքական կյանքում դեռեւս մեծ դերակատարում չունի:

Այդուհանդերձ, Կենտրոնական Ասիայում իսլամի վերածնունդը նոր իրողություններ մտցրեց տեղական հասարակությունների կյանքում: Շատ երիտասարդներ մեկնեցին իսլամական երկրներ՝ կրոնական կրթություն ստանալու, մեծ հետաքրքրություն առաջացավ արաբերենի նկատմամբ, ավելացավ մզկիթների, կրոնական դպրոցների՝ մեդրեսեների եւ իսլամական բարձրագույն համալսարանների թիվը, իրենց գործունեությունը սկսեցին ակտիվացնել իսլամական միսիոներները:

Անկախության ձեռքբերումից հետո կենտրոնաասիական հանրապետություններում աստիճանաբար սեփական հետաքրքրությունները սկսեցին հետապնդել տարածաշրջանային եւ միջազգային մի շարք

ուժեր, այդ թվում՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Թուրքիան, Իրանը, Պակիստանը, Չինաստանը, Սաուդյան Արաբիան, Իսլամական կոնֆերանսի անդամ այլ երկրներ, ինչպես նաև առանձին եվրոպական պետություններ:

Հիշյալ խնդրի իրականացման համար կարելուհարգույն գործոն էր հենց իսլամը: Այս համատեքստում տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրություն ունեցող պետություններն, ընդհանուր առմամբ, ներկայացնում էին երկու խումբ: Առաջին խումբը կողմ էր կենտրոնաասիական երկրների որոշակի իսլամականացմանը կամ սեփական մոդելի նմանությամբ զարգացմանը (Իրան, Թուրքիա, Սաուդյան Արաբիա, Պակիստան): Մինչդեռ մյուս խումբը՝ ԱՄՆ, եվրոպական երկրներ, Ռուսաստան, Չինաստան, Իսրայել, կողմ էր, որ տարածաշրջանի պետությունները զարգանան աշխարհիկ իսլամական մոդելով:

Անկախության հռչակման առաջին իսկ օրվանից կենտրոնաասիական երկրների ղեկավարները, որոնց մեծ մասի նախկին գործունեությունն առնչվում էր կոմունիստական շրջանի հետ, հայտարարեցին իրենց կապվածությունը զարգացման աշխարհիկ ուղուն, ինչը հետագայում ամրագրվեց այդ երկրների սահմանադրություններում:

Առհասարակ, կենտրոնաասիական կառավարությունները հետամուտ են երկու հիմնական խնդրի: Առաջին. վերահսկել քաղաքական իսլամի (չափավոր, թե արմատական) ընդլայնումը՝ պաշտոնական իսլամից դուրս իսլամի ցանկացած դրսևորում դիտարկելով որպես սպառնալիք պետական համակարգին եւ անվտանգությանը: Երկրորդ. օգտագործել իսլամը՝ հիմնավորելու իշխանության լեգիտիմությունը, գաղափարներն ու ծրագրերը:

Սակայն այսօր էլ տարածաշրջանի պետությունների քաղաքական դաշտում գործում են ուժեր, որոնք կողմնորոշված են դեպի իսլամի քաղաքական գաղափարախոսությունը: Իսլամիստների առաջին լուրջ դրսևորումը տեղի ունեցավ Ուզբեկստանում, որտեղ ենթարկվելով բռնությունների՝ նրանք տեղափոխվեցին Տաջիկստան, այնտեղից էլ՝ Աֆղանստան. այստեղ ձեւավորվեց Տալիբանի աջակցությունը վայելող «Ուզբեկստանի իսլամական շարժումը»: 1990-ականների սկզբներին Ուզբեկստանում իր գործունեությունը սկսեց ծավալել նաև Մերձավոր Արեւելքի արաբական մի շարք երկրներում գործող «Հիզբ ութ-թահրիր ալ-իսլամի» իսլամիստական կազմակերպության մասնաճյուղը, որն այդտեղից տարածվեց հարեւան երկրներ:

Իսլամական գործոնը զգալի դերակատարություն ունեցավ Տաջիկստանի քաղաքական կյանքում հատկապես քաղաքացիական պատերազմի (1992-1997) շրջանում: Ընդդիմությունը ղեկավարում էր «Իսլամական վերածննդի կուսակցությունը» (ԻՎԿ): Հատկանշական է,

որ կուսակցությունն իր գործունեությունը սկսել էր դեռևս գորբաչովյան շրջանում՝ 1980-ականներին, եւ նպատակ ուներ բարձրացնել խորհրդային մահմեդականների իսլամական ինքնությունը, մեկ միասնական դիրքորոշում մշակել կոմունիստական վարչակարգի դեմ: 1997-ին կնքված հաշտության պայմանագրով, ճիշտ է, ԻՎԿ-ն լեգիտիմացվեց, սակայն զգալիորեն թուլացավ՝ հոգուտ նախագահ Է.Ռահմոնովի, ով ամրապնդեց իր դիրքերն իշխանական լծակներում: ԻՎԿ-ն Տաջիկստանում պաշտոնապես գրանցված է որպես իսլամական կուսակցություն, ինչը հազվադեպ երեւոյթ է Կենտրոնական Ասիայի պարագայում:

Իսլամական գործունի ազդեցությամբ Ղրղըզստանում եւ Ուզբեկստանում 1999-2000թթ. ռազմական գործողություններ իրականացրեց «Ուզբեկստանի իսլամական շարժումը», իսկ 2004թ. ահաբեկչական գործողություններ տեղի ունեցան Ուզբեկստանի մայրաքաղաքում:

Այսօր կենտրոնաասիական հանրապետությունների կառավարություններին կից գործում են կրոնական գործերով զբաղվող մարմիններ, որոնք պատասխանատու են կրոնական կազմակերպությունների եւ մզկիթների գրանցման ու գործունեության վերահսկման համար: Առանց հիշյալ կառույցի թույլտվության կրոնական գործունեությունը չի կարող օրինական լինել: Պետությունը գործում դերակատարություն ունի նաեւ կրոնական առաջնորդների նշանակման հարցում եւ վերահսկում է նաեւ բարձրաստիճան հոգեւորականությանը եւ պաշտոնական իսլամի կառույցները: Նման մոտեցումն առանձին դեպքերում համարժեք չի ընկալվում: Կան իմամներ, ովքեր կառավարության միջամտությունը կրոնական գործերին ոչ միշտ են համարում ընդունելի եւ շատ դեպքերում ձգտում են ազատ գործունեության, ինչի համար հետապնդվում են: Մինչդեռ իշխանությունները նմանօրինակ քայլերը հիմնավորում են արմատական իսլամիզմի նկատմամբ վերահսկողություն հաստատելու անհրաժեշտությամբ:

Իսլամական կրթության եւ գիտելիքի մակարդակը տարածաշրջանի երկրներում, ընդհանուր առմամբ, ցածր է: Մեդրեսեները շատ դեպքերում անմխիթար վիճակում են, իսկ հոգեւոր սպասավորները՝ մասնավորապես մոլլաները, հիմնականում կիսագրագետ են: Այս համատեքստում ժողովրդականություն կարող են ունենալ միսիոներները, որոնց քարոզներն առավել համոզիչ են թվում:

Կան կանխատեսումներ, որ առաջիկայում տարածաշրջանում իսլամի քաղաքականացումը կարող է առավել ակտիվ փուլ մտնել, ինչը հիմնականում պայմանավորված կլինի ոչ այնքան քաղաքական, որքան սոցիալական եւ տնտեսական գործոններով, ինչպես նաեւ գլոբալացման գործընթացներով: Տեսակետներ կան նաեւ այն մասին, որ

ահաբեկչական գործողությունների հնարավորությունը նույնպես մեծանալու է, քանի որ տեղի է ունենում ահաբեկչական ենթակառուցվածքների աստիճանական ձեւավորման գործընթաց:

Ներկայումս Կենտրոնական Ասիայում գործում են միջազգային ահաբեկչական կազմակերպությունների մի շարք մասնաճյուղեր եւ տեղական արմատական կառույցներ: Դրանցից են՝ «Ալ-կաիդան», «Հիզբ ութ-թահիրը», «Ուզբեկստանի իսլամական շարժումը», «Արեւելյան Թուրքեստանի իսլամական կուսակցությունը», «Քրդական ազգային կոնգրեսը», «Ասբատ ալ-անսարը», «Մուսուլման եղբայրները», «Բոզ գուրդը», «Կենտրոնական Ասիայի մոջահիդների միությունը», «Լաշքարի թայբան», «Սոցիալական բարեփոխումների միությունը», «Տալիբանը», «Թաբլիդի ջամաթը» եւ այլն, որոնց գործունեությունը որոշակիորեն ակտիվացավ սեպտեմբերի 11-ից հետո:

Առանձին փորձագետների համոզմամբ՝ շուրջ 55 միլիոն բնակչություն ունեցող տարածաշրջանում ամենավտանգավոր ընդհատակյա իսլամիստական կազմակերպությունը «Հիզբ ութ-թահիրը» է, որի գաղափարախոսության հիմքում ընկած է աշխարհիկ վարչակարգերի տապալման ու իսլամական տիպի պետությունների ստեղծման գաղափարը՝ հանուն արդարության եւ բարեկեցության վերականգնման: Վերջնական նպատակը տարածաշրջանում իսլամական խալիֆայության ստեղծումն է: Կազմակերպության հռետորականության մեջ մեծ տեղ են զբաղեցնում հակամերիկյան քարոզչությունը, Արեւմուտքի դեմ սրբազան պատերազմի կոչերը: Փորձագիտական տվյալների համաձայն՝ Կենտրոնական Ասիայում «Հիզբ ութ-թահիրը» շարժման անդամների թիվը 15-20.000 է: Նրա գործունեության հիմնական արեալը Ֆերգանայի հովիտն է:

Ուզբեկական իշխանությունները շարժումը մեղադրում են 2004թ. Տաշքենդի պայթյունների կազմակերպման եւ 2005թ. Անդիջանի հայտնի դեպքերին մասնակցություն ունենալու մեջ: Շարժումն ակտիվ գործունեություն է ծավալում նաեւ Դրոզդստանում: Միայն 2006թ. շուրջ 3000 մարդ է հավատարմագրվել այդ կառույցին, որը, որպես կանոն, գործում է խիստ գաղտնի: Շարժումն ունի տպագրություն, և մեծ տպաքանակով գրականություն եւ թռուցիկներ են հրատարակվում:

Տարածաշրջանում իսլամիստական կազմակերպությունների գործունեությանն էապես նպաստում են մի շարք գործոններ՝ սոցիալական բեւեռացումը, գործազրկությունը, աղքատությունը, կոռուպցիան, սահմանների թափանցիկությունը, միջէթնիկ հակասությունները եւ, վերջապես, աշխարհաքաղաքական հարեւանությունը քաղաքական առումով ոչ կայուն տարածաշրջանների՝ Կովկասի, Աֆղանստանի,

ուլդուրական Սինգգյանի հետ: Այս հանգամանքները տարածաշրջանը դարձնում են ավելի խոցելի:

Իսլամիստական կազմակերպությունների գործունեության կարելուր ասպեկտներից մեկը սոցիալական ուղղվածությունն է: Վերջիններս բարեգործական տարբեր ծրագրեր են իրականացնում անապահով շրջաններում, մասնավորապես գյուղական բնակավայրերում՝ առաջին հերթին ձգտելով աջակցել գործազուրկ եւ անապահով երիտասարդների, այդպիսով շահելով զանգվածների համակրանքը:

Կենտրոնական Ասիայի հանրապետությունների վարչակարգերի ներքին քաղաքականության ամենաբնորոշ եւ ընդհանուր գծերից մեկը անողոք եւ անզիջում պայքարն է իսլամական արմատական ուժերի դեմ: Սակայն, չնայած շոշափելի արդյունքներին՝ իշխանություններին այդպես էլ չի հաջողվում արմատախիլ անել իսլամիստական այլախոհական շարժումները, ինչը կապված է մի շարք հանգամանքների հետ: Մի կողմից հենց բռնություններն են, որ նպաստում են շարժումների ընդլայնմանը եւ հետագա արմատականացմանը, մյուս կողմից՝ իշխանությունների սոցիալ-տնտեսական անհաջող քաղաքականությունը չի նպաստում այդ երեւույթի հաղթահարմանը:

2007թ. հունվարի 11-ին ԱՄՆ Ազգային հետախուզության ծառայության այդ ժամանակվա ղեկավար Ջ.Նեգրոպոնտեն, ներկայացնելով երկրի անվտանգությանն առնչվող գլոբալ ռիսկերը, առանձնացրեց կենտրոնաասիական հանրապետությունները: Նա նշեց, որ բռնությունները, քաղաքական լճացումն ու կոռուպցիան, որ բնորոշ են այդ երկրների վարչակարգերին, նպաստավոր պայմաններ են ստեղծում արմատական իսլամական տրամադրությունների եւ շարժումների ծեւավորման համար: Այս հանգամանքը, ԱՄՆ տեսանկյունից, կասկածի տակ է դնում այդ երկրների հուսալիությունը էներգետիկ եւ հակաահաբեկչության դեմ պայքարի համագործակցության ոլորտներում:

Կենտրոնական Ասիայի գծով մասնագետ Մարթա Բրիլ Օլքոտի կարծիքով՝ ԱՄՆ-ը միայն սեպտեմբերի 11-ից հետո առավել հստակ գիտակցեց Կենտրոնական Ասիայի ռազմավարական նշանակությունը, իսկ մինչ այդ տարածաշրջանը Վաշինգտոնի համար հետաքրքրություն էր ներկայացնում սոսկ Կասպիական շրջանի էներգետիկ պաշարների առումով: Սեպտեմբերի 11-ից հետո ԱՄՆ-ը տարածաշրջանում իր ազդեցության մեծացմանն ուղղված քայլեր արեց, ինչը, սակայն, չէր կարող արդարացնել տարածաշրջանի վարչակարգերի սպասելիքները, որոնց քաղաքական կողմնորոշումներում Ռուսաստանն աստիճանաբար տիրապետող դարձավ: Իշխանություններն, իրենց հերթին, չկարողացան հաջողությամբ իրականացնել քաղաքական եւ տնտե-

սական բարեփոխումները: Արդյունքում՝ տարածաշրջանում պարարտ հող գտան իսլամիստական ուժերը:

Ակնհայտ է, որ Կենտրոնական Ասիան վերջին շրջանում որոշակիորեն իսլամականացել է: Իսլամը որոշ չափով տիրապետող է դարձել մասնավորապես սոցիալական ոլորտում: Մեծացել է հեջաբ (իսլամական գլխաշոր) կրողների, ինչպես նաև իսլամական ծիսակարգին հետևողների թիվը, բացվել են «հալալ» սիստեմի խանութներ (որտեղ իսլամական սնունդ է վաճառվում), իսկ Մեքքա ուխտի գնալը տարածում է գտել թե՛ հասարակ ժողովրդի, թե՛ պաշտոնյաների շրջանում: Հարսանիքները նույնպես առավելաբար սկսել են անցկացվել իսլամական ձևով, ինչը նկատի է առնում խնջույքին կանանց եւ տղամարդկանց առանձին նստելը, ավրոհոլային խմիչքների ու բարձր երաժշտության արգելքը:

Հատկանշական է, որ վերջերս Ղազախստանում կանանց թույլատրվել է անձնագրի համար լուսանկարվել գլխաշորով: Տաջիկստանում շատ դեպքերում նման թույլտվություն տալիս են, մինչդեռ Թուրքմենստանում, Ուզբեկստանում եւ Ղրղըզստանում կանայք նման թույլտվություն դեռեւս չունեն: Իշխանություններն ակտիվորեն պայքարում են, որպեսզի աղջիկները կրթական հաստատություններում գլխաշոր չկրեն: Տաջիկստանում եւ Ղրղըզստանում արձանագրվեցին դեպքեր, երբ ուսանողուհիները գերադասեցին հրաժարվել կրթությունից, բայց ոչ՝ գլխաշորից: Գլխաշոր կրելու թույլտվություն ստանալու տեսանկյունից հետաքրքրական է 2007թ. հուլիսին Օտար լեզուների տաջիկական ինստիտուտի ուսանողուհիներից մեկի հայցն ընդդեմ իր ինստիտուտի եւ կրթության նախարարության, ինչը, սակայն, մերժվեց: Իշխանությունների հավաստիացմանը՝ գլխաշորը որեւէ ձևով չի վտանգում կրոնը դավանելու ազատությունը, մինչդեռ հակասության մեջ է մտնում աշխարհիկ պետության սկզբունքների հետ:

Կրոնականացվածության մակարդակով որոշակիորեն աչքի է ընկնում Ֆերգանայի հովիտը: Մասնավորապես, Ֆերգանայի ուզբեկական՝ արեւելյան հատվածում այսօր աշխարհիկ օրենքները, չնայած իշխանությունների ձեռնարկած ջանքերին, աստիճանաբար դուրս են մղվում՝ իրենց տեղը զիջելով շարիաթի օրենքներին: Այստեղ կանանց գերակշիռ մեծամասնությունն իսլամական տարագ է հագնում: Իսլամական արմատական կազմակերպությունները Ֆերգանայում օրըստօրե ավելանում են:

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ
ԼԻՔԱՆԱՆՈՒՄ
Լիլիթ Չարությունյան**

Վերջին երկու ամիսներին Լիբանանի հյուսիսում, մասնավորապես՝ Տրիպոլի քաղաքի շրջակայքում գտնվող Նահր ալ-բարիդ պաղեստինյան փախստականների ճամբարի մատույցներում, լիբանանյան անվտանգության ուժերի եւ «Իսլամական ֆաթի» (արաբերեն՝ «Ֆաթի ալ-իսլամ») խմբավորման գրոհայինների միջեւ ընթացող զինված բախումները միջազգային հանրության ուշադրությունը կրկին սեւեռեցին այդ երկրում ընթացող զարգացումների վրա: 2006թ. «Իսլամական ֆաթի» խմբավորման շուրջ 500 գրոհային հաստատվեց Նահր ալ-բարիդ պաղեստինյան փախստականների ճամբարում, որտեղ բնակվում էր շուրջ 40 հազ. պաղեստինցի:

1990թ. Լիբանանում քաղաքացիական պատերազմի ավարտից հետո վերոնշյալ ընդհարումները, թերեւս, իսլամականների հետ առաջին լուրջ բախումներն էին, որոնք երկրի իշխանություններին կրկին հիշեցրին իսլամական ծայրահեղականների ակտիվացման վտանգի մասին: Վերջիններս համախոհներ ունեն ոչ միայն հիմնականում սուննիաբնակ Տրիպոլիում, այլ նաեւ երկրի մյուս քաղաքներում ու դրանցում գտնվող պաղեստինյան փախստականների ճամբարներում:

Ըստ 1969թ. Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) եւ լիբանանյան իշխանությունների միջեւ կնքված Կահիրեի համաձայնագրի՝ Լիբանանի տարածքում գտնվող շուրջ 15 պաղեստինյան փախստականների ճամբարները (որոնցում բնակվում է տարբեր տվյալներով 350-450 հազ. փախստական) դե-յուրե հանձնվեցին պաղեստինցիների վերահսկողությանը: 1969թ. ի վեր լիբանանյան իշխանությունները չեն միջամտել այդտեղ ընթացող գործընթացներին, երկրի անվտանգության ուժերը չեն թափանցել ճամբարների տարածք, ինչը լավագույնս օգտագործեցին «Իսլամական ֆաթիի» գրոհայինները:

«Իսլամական ֆաթիի» գործունեությունը դատապարտում են ինչպես Լիբանանի իշխող «Մարտի 14-ի ուժերի» բոլոր ղեկավարները, այնպես էլ սիրիամետ եւ իրանամետ ընդդիմադիր ճակատի հիմնական ուժերը, որոնք դեռեւս մայիսի 21-ին՝ ի դեմս շիական ծայրահեղական «Յիզբալլահ» շարժման, հայտարարեցին, որ լիբանանյան բանակի դեմ

ցանկացած ագրեսիա հարված է՝ ուղղված նաեւ երկրի կայունությանն ու անվտանգությանը: Նրանք իրենց աջակցությունը հայտնեցին լիբանանյան բանակի գործողություններին:

«Իսլամական ֆաթի» խմբավորումը սերուն է սիրիամետ «Ընդվզող ֆաթի» (արաբերեն՝ «Ֆաթի ալ-ինթիֆադա») կազմակերպությունից, որից այն առանձնացավ 2006-ին: Իր հերթին, «Ընդվզող ֆաթի», որի գլխավոր գրասենյակը գտնվում է Դամասկոսում, մտնում էր «Ֆաթի» պաղեստինյան կազմակերպության մեջ, որից անջատվեց 1983թ.:

«Իսլամական ֆաթի» խմբավորման կազմավորման եւ այն հովանավորող ուժերի վերաբերյալ շրջանառվում են մի քանի տեսակետներ: Առաջինի համաձայն՝ «Իսլամական ֆաթի» սերտ կապեր ունի «Ալ-կաիդա» միջազգային ահաբեկչական կազմակերպության հետ, որի կայքէջում էլ հաճախ տեղադրում է իր հայտարարությունները: Խմբավորման ղեկավարությունը, սակայն, հերքում է իր կապը «Ալ-կաիդայի» հետ:

Երկրորդ տեսակետի համաձայն, որ կիսում են նաեւ մի շարք լիբանանյան քաղաքական ուժեր, կազմակերպությունը ստեղծվել է սիրիական հատուկ ծառայությունների աջակցությամբ եւ գաղտնի կերպով ուղղորդվում է Դամասկոսից: Ըստ էության, Սիրիան դեմ չէր լինի Լիբանանում (որը Դամասկոսն ավանդաբար համարում է «Մեծ Սիրիայի» անբաժան մասը) ունենալ սիրիամետ եւս մեկ դաշնակից՝ հանձին սուննի ծայրահեղական «Իսլամական ֆաթի» կազմակերպության: Սակայն տվյալ դեպքում պաշտոնական Բեյրութը ձեռնպահ է մնում Դամասկոսին Լիբանանի ներքին գործերին միջամտելու ուղղակի մեղադրանքներ առաջադրելուց: Իրենց հերթին, սիրիական իշխանությունները կտրականապես հերքում են կազմակերպության հետ առնչությունը:

Մեկ այլ տեսակետի համաձայն, որն առաջ քաշեց New Yorker-ի լրագրող Սեյմուր Չերչը, լիբանանյան կառավարությունն ինքն է աջակցել սուննիական «Ֆաթի ալ-իսլամի» կազմավորմանը՝ նպատակադրվելով օգտագործել այն Լիբանանում զգալի կշիռ ունեցող ընդդիմադիր «Չիզբալլահ» շիական խմբավորման դեմ: Այս տեսակետը պաշտպանեց նաեւ Բեյրութի Ամերիկյան համալսարանի դոկտոր Ֆրանկլին Լեմբը: Վերջինիս պնդմամբ՝ խմբավորման կազմավորման փուլում ԱՄՆ պետքարտուղարի օգնական Դեւիդ Վելչը բանակցություններ էր վարում սաուդցիների եւ Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Չարիրիի որդու՝ Սաադ Չարիրիի հետ, որոնց նպատակն էր համոզել լիբանանյան կառավարությանն աջակցություն ցույց տալ «Ֆաթի ալ-իսլամին», քանի որ այն հետագայում կարող էր հակակշիռ դառնալ «Չիզբալլահին»:

«Իսլամական ֆաթի» խմբավորման ղեկավարը պաղեստինցի Շակիր Ալ-Աբսիհն է, ով սերտ կապեր ունի Սիրիայի հատուկ ծառայությունների հետ: 2004թ. հորդանանյան դատարանը հեռակա կարգով նրան դատապարտեց մահվան՝ ամերիկացի դիվանագետ Լորենս Ֆոլի սպանության կազմակերպման մեղադրանքով: Հորդանանյան իշխանությունները դիմեցին Դամասկոսին՝ Գոլանում ռազմական գործողություն ծրագրելու եւ զենքի անօրինական վաճառքով զբաղվելու մեղադրանքով Սիրիայում բանտարկված Ալ-Աբսիհին հանձնելու խնդրանքով, սակայն սիրիական իշխանությունները մերժեցին: 2005թ. բանտից ազատ արձակվելուց հետո նա մեկնեց Իրաք, որտեղ պայքարում էր կոալիցիոն ուժերի դեմ: 2006թ. Ալ-Աբսիհն հաստատվեց Լիբանանում, որտեղ մի քանի համախոհների հետ Բեքաայի հովտում հիմնեց ռազմական պատրաստության ճամբար: Այստեղ մարտական պատրաստություն անցած մարտիկներն էլ 2006թ. համալրեցին «Ֆաթի ալ-իսլամի» շարքերը:

Լոնդոնյան «Ալ-հայաթ» թերթը նշում է, որ «Իսլամական ֆաթի» չի կարող համարվել բացառապես պաղեստինյան կազմակերպություն: «Այն խառը խմբավորում է, որում ներկայացված են ինչպես պաղեստինցիներ, այնպես էլ արաբական այլ երկրների ներկայացուցիչներ, այդ թվում նաև լիբանանցիներ: Կազմակերպության շարքերում պաղեստինցիների քանակը չի գերազանցում 30%-ը: Նրանցից ոմանք ունեն Բաղդադում եւ Իրաքի այլ շրջաններում ամերիկացիների եւ շիաների հետ զինված պայքարի փորձ»:

Վերոնշյալ թերթի պնդմամբ՝ կազմակերպության իսլամական անվանումը հնարավորություն է տալիս նրա ղեկավարներին հրապարակել ֆեթվաներ, որոնք խմբավորման գրոհայիններին թույլ են տալիս հարձակումներ իրականացնել լիբանանյան բանկերի եւ միջազգային կազմակերպությունների գրասենյակների վրա: Հարձակումներից ստացված միջոցներն ուղղվում են ինչպես ճամբարների փախստականներին աջակցություն ցույց տալուն, այնպես էլ «անհավատների եւ իսլամի դրույթներից շեղվածների դեմ ջիհադի իրականացմանը»: Սակայն հարձակումներից ստացված միջոցների զգալի մասն ուղղվում էր Լիբանանի հյուսիսում «Իսլամական ֆաթիի» ռազմական հենակետերի ամրապնդմանը:

«Իսլամական ֆաթիի» գրոհայինների եւ լիբանանյան բանակի միջեւ ընթացող հակամարտության ողջ ընթացքում խմբավորման ղեկավարությունը փորձում է ստանալ Լիբանանում գործող այլ պաղեստինյան խմբավորումների աջակցությունը, որոնց մեծ մասը, սակայն, օժանդակություն է հայտնել կառավարության գործողություններին: Միակ պաղեստինյան կազմակերպությունը, որն աջակցություն հայտնեց «Ֆաթի ալ-

իսլամին» ծայրահեղական «Դամասկոսի մարտիկներ» (արաբերեն՝ «Ջունդ ալ-շամ») խմբավորումն էր: Այն փորձեց «Իսլամական ֆաթիհ» եւ լիբանանյան իշխանությունների միջեւ հակամարտության սահմաններն ընդլայնել՝ դրանում ներգրավելով նաեւ Սիրիայի մոտ գտնվող Այն ալ-հիլվե ճամբարը: Հունիսի 3-ին «Ջունդ ալ-շամի» մարտիկները հարձակվեցին Այն ալ-հիլվե ճամբարի մոտ տեղակայված լիբանանյան բանակի պահակակետի վրա: Արդյունքում՝ սպանվեց 2 զինծառայող, վիրավորվեց 5-ը: Գրոհայինների շրջանում զոհերի թիվը 2-ն էր: Լիբանանյան բանակին հաջողվեց կանխել բախումների հետագա խորացումը:

Հետաքրքրական է, որ երբ մայիսի վերջին լիբանանյան իշխանությունները հայտարարեցին, թե պատրաստվում են գրոհել Նահր ալ-բարիդ ճամբարը, «Հիզբալլահի» ղեկավար Հասան Նասրալլահը լիբանանյան իշխանություններին կոչ արեց ձեռնպահ մնալ գրոհից: Նա զգուշացրեց, որ գրոհի արդյունքում Լիբանանը կարող է ներքաշվել իսլամականների հետ պատերազմի մեջ՝ դրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով:

Լիբանանյան «Ալ-Նահար» թերթի պնդմամբ՝ «Ֆաթի ալ-իսլամը» ծրագրել էր «սեպտեմբերի 11-ի սցենարով» ահաբեկչական գործողություններ իրականացնել Բեյրութում արեւմտյան դեսպանատների եւ զբոսաշրջության կենտրոնների դեմ: Այս տվյալները ստացվել էին «Ֆաթի ալ-իսլամի» ձերբակալված գրոհայինների հարցաքննությունների արդյունքում: Թերթը նշում էր նաեւ, որ Տրիպոլիի հյուսիսում հայտնաբերվել է պայթուցիկներով լեցուն պահեստ, որոնք բերվել էին Սիրիայից՝ ահաբեկչական գործողություններ իրականացնելու նպատակով:

Հունիսի սկզբին, գրոհայինների հետ բանակցությունների ձախողման պայմաններում, լիբանանյան իշխանություններն, այնուամենայնիվ, որոշեցին գրոհել Նահր ալ-բարիդ ճամբարը: Արդյունքում՝ սպանվեց նաեւ «Ֆաթի ալ-իսլամի» ղեկավարներից մեկը՝ Նաիմ Դիբ Ղալին:

Հունիսի 20-ին լիբանանյան բանակը վերահսկողություն հաստատեց Նահր ալ-բարիդի, այսպես կոչված, նոր շրջանի նկատմամբ: «Ֆաթի ալ-իսլամի» գրոհայինները շրջափակման մեջ հայտնվեցին ճամբարի հին շրջանում: Պարտությունից խուսափելու նպատակով իսլամականները միջնորդի դեր ստանձնած պաղեստինյան կազմակերպությունների միջոցով լիբանանյան իշխանություններին տեղեկացրին, որ պատրաստ են բանակցել վերջիններիս հետ:

Կառավարությունը, սակայն, հայտարարեց, որ այլեւս հակված չէ բանակցել գրոհայինների հետ եւ առաջարկեց զենքը վայր դնել ու

հանձնվել իրավապահ մարմիններին: Հակառակ դեպքում իշխանությունները մտադիր են պարբերական գրոհների արդյունքում վերջնականապես ոչնչացնել խմբավորման գրոհայիններին:

Հուլիսի 12-ին լիբանանյան բանակը կրկին լայնածավալ գրոհի ենթարկեց Նահր ալ-բարիդի հին շրջանը՝ փորձելով որոշիչ հարված հասցնել գրոհայիններին: Հուլիսի կեսի տվյալներով՝ շուրջ երկու ամիս շարունակվող հակամարտության արդյունքում արդեն իսկ սպանվել է 200 մարդ, որից մոտ 100-ը՝ լիբանանյան բանակի զինվորներ: Ճամբարի ավելի քան 35 հազ. բնակիչ լքել է Նահր ալ-բարիդը:

Թեև լիբանանյան իշխանություններին չհաջողվեց վերջնականապես ճնշել «Ֆաթի ալ-խալամի» գրոհայինների գործողությունները, սակայն պաշտոնական Բեյրութը հաջողեց թույլ չտալ ռազմական գործողությունների ընդլայնում պաղեստինյան փախստականների այլ ճամբարներում եւ խուսափել երկրի պաղեստինյան համայնքի հետ հակասությունների սրումից:

Պաղեստինյան ծայրահեղականների գործողությունները նպատակ են հետապնդում վերադարձնել մինչեւ 1982թ. իսրայելյան ներխուժումը (որի արդյունքում ՊԱԿ-ն իր կառույցներով դուրս բերվեց Լիբանանից) երկրում պաղեստինցիների ունեցած զգալի կշիռը եւ կրկին դառնալ Լիբանանի ներքաղաքական կյանքի ակտիվ դերակատար՝ ձգտելով գտնել տարածաշրջանային որեւէ ուժի աջակցությունը:

Վերջին շրջանում թեև Սիրիային հաջողվել էր որոշակիորեն բարելավել հարաբերություններն ինչպես Եվրամիության, այնպես էլ ԱՄՆ-ի հետ, իսկ Սիրիայի նախագահ Բաշար Ասադին տվյալ փուլում ձեռնտու չէ Լիբանանի հետ հարաբերությունների հերթական սրումը, սակայն բացառված չէ, որ սիրիական որոշ ուժեր շահագրգռված են լիբանանա-սիրիական հարաբերությունների վերստին սրմամբ եւ հովանավորում են «Իսլամական ֆաթի» գրոհայիններին:

Պաշտոնական Դամասկոսը շարունակում է հերքել իր կապը ընդհանրապես Լիբանանում ընթացող զարգացումների հետ: Սակայն հետաքրքրական է, որ «Ֆաթի ալ-խալամի» գործողությունների ակտիվացումը հանրակալ ՄԱԿ Անվտանգության խորհրդի՝ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով միջազգային դատարանի կազմավորման գործընթացին:

ՀԱՆՍ ԲԼԻՔՍ. «ՄԻԱՅՆ ՈՒԺՈՎ ԽՆԴԻՐՆԵՐ ՉԵՆ ԼՈՒԾՎՈՒՄ»

Հանս Բլիքսն (ծնվ. 1928թ.) ունի 45 տարվա դիվանագիտական կարիերա, որի զգալի մասը հատկացվել է ռազմավարական կայունության խնդիրների լուծմանը: 1978-1979թթ. նա գլխավորել է Շվեդիայի արտաքին գործերի նախարարությունը, իսկ այնուհետև (1981-1997թթ.) զբաղեցրել է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր տնօրենի պաշտոնը: Սակայն Բլիքսի աստեղային ժամը վրա հասավ 2000-ին, երբ նշանակվեց ՄԱԿ Դիտարկման, վերահսկողության եւ տեսչության հանձնաժողովի (UNMOVIC) ղեկավար: Հենց նրան հարկ եղավ 2002-2003թթ. ստուգել ամերիկյան հետախուզության պնդումները, թե Սադամ Հուսեյնը շարունակում է զանգվածային ոչնչացման զենքի մշակումը: Հանձնաժողովը չգտավ Վաշինգտոնի իրավացիության ապացույցներ: Այնուամենայնիվ, Միացյալ Նահանգները 2003թ. մարտին ներխուժեց Իրաք:

Հանս Բլիքսի հետ, որն այժմ գլխավորում է Ջանգվածային ոչնչացման զենքի հարցերով միջազգային (անկախ) հանձնաժողովը, զրուցել է Ֆյոդոր Լուկյանովը:

Հարց.— Ինչո՞ւ են երկրները ցանկանում տիրել միջուկային զենքի: Դա կարգավիճակի՞, թե՞ անվտանգության խնդիր է:

Պատ.— Հիմնականում՝ այդ երկու պատճառներով: Օրինակ, Իրաքի վերաբերյալ ես չեմ կարծում, թե պաշտպանության համար Սադամ Հուսեյնին անհրաժեշտ էր զանգվածային ոչնչացման զենք: Նրա համար այն ծառայում էր իբրև շանտաժի միջոց, նախապատվություններ ստանալու գործիք: Լիբիայում՝ Մուամար Քադաֆիի մոտ, նույն իրավիճակն է. նա միջուկային զենքի օգնությամբ ոչ ոքից չի պաշտպանվելու: Իսկ եթե վերցնենք երկու առավել «թեժ» դեպքերը՝ Իրանը եւ Հյուս. Կորեան, ապա այնտեղ, անշուշտ, առաջնահերթ է անվտանգության խնդիրը, կարգավիճակը երկրորդային է:

Ի դեպ, Փենյանում չեն մոռացել 1950 թվականը, երբ կորեական պատերազմի թեժ պահին գեներալ Դուգլաս Մաքարթուրը թույլտվություն ստացավ խիստ անհրաժեշտության դեպքում կիրառել միջուկային զենք: Չկիրառեց, բայց սկզբունքորեն դրան պատրաստ էր: Վարչակարգի

առանձնահատկության պատճառով հյուսիսկորեացիները տառապում են խելացնորությամբ. նրանք իրենց զգում են լիակատար մեկուսացման մեջ, որովհետեւ անգամ նրանց ավանդական դաշնակիցներ Ռուսաստանն ու Չինաստանն են վրդովնումք ապրում, իսկ ԱՄՆ-ը, ընդ որում, չարագուժորեն զգուշացնում է, թե «բոլոր հնարավորությունները բաց են», այդ թվում եւ ռազմական: Որոշակի իմաստով՝ սա նաեւ կարգավիճակի խնդիր է, ավելի ստույգ՝ իր վրա ուշադրություն գրավելու, իր հետ խոսել ստիպելու միջոց:

Ինչ վերաբերում է Իրանին, ապա միջուկային ծրագրի տարրերի վրա աշխատանքներն սկսել են 1980-ին, երբ պատերազմ էր գնում Իրաքի հետ: Եվ այն ժամանակ կար առավել քան հիմնավորված կասկած, որ Բաղդադը մշակում է միջուկային զենք. պատահական չէր, որ իսրայելցիները 1981թ. ռմբակոծեցին իրաքյան ռեակտորն Օզիրաք քաղաքում: Այնպես որ՝ իրանական ծրագիրը նպատակաուղղված էր կոնկրետ թշնամու դեմ: Գիշտ է, նա արդեն չկա, սակայն այժմ սպառնալիքի աղբյուր է համարվում Միացյալ Նահանգները:

Հարց–Շատերը կարծում են՝ Յուսեյնին ոչնչացրին հենց այն պատճառով, որ նրա մոտ չկար միջուկային զենք: Իսկ եթե լիներ, Ամերիկյան նրա հետ այլ կերպ կխոսեր:

Պատ.–Ես համոզված չեմ, թե ԱՄՆ-ը կիրառարվեր Իրաքի դեմ պատերազմից, եթե ստույգ իմանար, որ Յուսեյնի մոտ կա զանգվածային ոչնչացման զենք եւ որ նա, օրինակ, ընդունակ է այն կիրառել Իսրայելի դեմ: Իրաքի ու, դիցուք, Յուս.Կորեայի միջեւ սկզբունքային տարբերությունն այն է, որ Իրաքի պարագայում Վաշինգտոնը համոզված էր՝ Յուսեյնի դեմ պատերազմի դեպքում ոչ ոք հանդես չի գա նրա կողմում: Յուս.Կորեայի հետ այլ է. այն գտնվում է Չինաստանի եւ Ռուսաստանի հետաքրքրությունների ոլորտներին չափազանց մոտ:

Հարց–Իսկ ինչպե՞ս են գործերը Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրի (ՄՁՉՊ) հետ: Մի՞թե կասկած կա, ասենք, կարճագույն ժամկետում ճապոնիայի՝ միջուկային երկիր դառնալու կարողության մեջ:

Պատ.–Ղա կլինի, եթե տեղի ունենա «դոմինոյի էֆեկտ»: Եթե մենք լուծենք Իրանի ու Յուս.Կորեայի հետ կոնֆլիկտը, ապա նրանց հարեւանների մոտ զսպման պահանջ չի առաջանա: Հարցն այն է՝ ինչպիսին են միջուկային զենք ձեռք բերելու ելակետային հնարավորությունները: Ասենք, Հորդանանում կամ Սաուդյան Արաբիայում տեխնո-

լրգիական պատրաստվածությունը բոլորովին սաղմնային փուլում է: Եգիպտոսը տեսականորեն ընդունակ է որել բանի հասնել: Արաբական երկրներից սկզբունքորեն մյուսներից ավելի հեռու կարող էր գնալ Այժիրը, բայց դա նրան ամենեւին չի հետաքրքրում: Ընդհանուր առմամբ, ես չեի չափազանցի այն վտանգը, թե պետությունների՝ միջուկային զենքի տիրելու ձգտումը կաճի:

ՄՁՉՊ-ն ի սկզբանե նպատակ ուներ հասնել առանց միջուկային զենքի աշխարհի: Նրանց, ովքեր չունեին միջուկային ներուժ, առաջարկվեց միանալ ՄՁՉՊ-ին եւ հրաժարվել միջուկային զենքի ստեղծման պլաններից, իսկ նրանց հետ, ովքեր ունեին, աստիճանաբար պայմանավորվել դրանց ոչնչացման վերաբերյալ: Իսրայելին, Չնդկաստանին եւ Պակիստանին, իրոք, չհաջողվեց ներգրավել: Բայց չէ՞ որ ինքնին չէր ենթադրվում, թե բոլորը, առանց բացառության, ավտոմատ կերպով կմիանան: Մեկին հաջողվեց համոզել, մեկին՝ դեռ ոչ: Գիշտ է, երբ ԱՄՆ-ը 2006թ. Չնդկաստանի հետ միջուկային համագործակցության մասին պայմանագիր կնքեց, դրանով նա հրաժարվեց նույն գաղափարից, որ Չնդկաստանը, սկզբունքորեն, երբեւէ կկարողանա միանալ ՄՁՉՊ-ին: Նույնը Պակիստանի հետ է: Ինչ վերաբերում է Իսրայելին, ապա հարցը դեռ վերջնականորեն փակված չէ:

ՄՁՉՊ-ի եւս մեկ լուրջ պարտություն. դա միջուկային «հնգյակի»՝ Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի պահվածքն է: ՄՁՉՊ-ի ստորագրման պահից ի վեր միջուկային լիցքերի ընդհանուր քանակը հաջողվեց 55 հազարից պակասեցնել մինչեւ 22 հազարի: Սպասվում է նաեւ լրացուցիչ նվազեցում՝ համաձայն 2002թ. Ռազմավարական հարձակողական հզորությունների կրճատման մասին պայմանագրի: Սակայն դա ավելցուկներից ազատում է: Ինչ վերաբերում է իրական ռազմավարական հնարավորություններին, ապա դրանք չեն նվազեցվում: Դեռ ավելին, ԱՄՆ-ում եւ Մեծ Բրիտանիայում աշխատանքներ են գնում նոր միջուկային զենքի ստեղծման ուղղությամբ, իսկ ռազմական դոկտրինները դառնում են առավել հանդուրժողական նրա կիրառման հնարավորության նկատմամբ: Սա «հնգյակի» կողմից պայմանագրի ակնհայտ խախտումն է, ինչը, անշուշտ, առաջացնում է ոչ միջուկային երկրների խոր վրդովմունքը: Միջուկային զենքի տիրելու նրանց ցանկության եւ Միացյալ Նահանգների՝ դրա նոր տեսակների ստեղծման աշխատանքների միջեւ անմիջական կապ չկա: Նման ձգտումն ավելի շուտ առաջացել է հարեւանների կողմից սպառնալիքի առկայությամբ: Ասենք, Եգիպտոսի մոտ միջուկային ամբիցիաներ կարող են ծագել ոչ թե ԱՄՆ-ի պատճառով, այլ Իրանի ու Իսրայելի: Բայց անհամեմատ

ավելի հեշտ կլիներ համոզել Իրանին եւ Յու.Կորեային, եթե մեծ տերութուններն իրենք միջուկային զինաթափման օրինակ ցույց տային:

Չարք-Դուք հիշեցրիք Օգիտաքի հետ պատմությունը, որը տեղի է ունեցել Չեր՝ ԱԷՄԳ ղեկավար եղած ժամանակ: Դուք այժմ ինչպե՞ս եք մտածում. դա Իսրայելի կողմից ճիշտ գործողություն էր: Չէ՞ որ նա աշխարհը փրկեց միջուկային Իրաքից:

Պատ.—Ո՛չ, ես այն ժամանակ դա համարում էի եւ այժմ էլ համարում եմ սխալ: Եթե չլիներ ռմբակոծումը, օբյեկտում կմնային ֆրանսիացի ինժեներներ, եւ կանցկացվեր ԱԷՄԳ տեսչություն: Բոլոր գործողությունները կգտնվեին վերահսկողության ներքո, եւ դյուրին կլիներ ամրագրել նրանց դուրս գալը խաղաղության շրջանակներից: Իրաքցիներին հարկ կլիներ վերակառուցել ռեակտորը՝ հետագա աշխատանքների թույլտվություն ստանալու համար: Ռմբակոծումից հետո ամեն ինչ անցավ ընդհատակ:

Չարք—Այսինքն՝ Օգիտաքը չի՞ կարող օրինակ լինել, ասենք, իրանական խնդրի լուծման համար:

Պատ.—Ո՛չ: Նախ հույս ունեմ, որ ամերիկացիներին կբավականացնի ընկալումն այն բանի, թե Բուշերի ԱԷԿ-ը ոչ մի առնչություն չունի միջուկային սպառնալիքների հետ: Եթե Ռուսաստանը վերցնի բանեցված վառելիքը, ապա Բուշերը ոչ նպատակային օգտագործման տեսանկյունից միանգամայն անվտանգ է: Եվ նրան հարվածելը կլինի հրեշավոր նախադեպ:

Կարելի է խոսել այլ օբյեկտների, օրինակ՝ Նաթանգի մասին: Անշուշտ, նման թիրախների ոչնչացումը կկասեցնի միջուկային ծրագիրը, ինչպիսի նպատակ էլ որ Իրանն իր առջեւ դրած լինի: Բայց այս դեպքում Թեհրանի հետ փոխգործակցման մասին կարելի կլինի մոռանալ, ու եթե ցեմտրիֆուգերի նախատիպերը պահպանվեն այլ վայրերում, ապա միջուկային հնարավորությունների ավելացման ջանքերը միայն կաշխուժանան:

Բանակցությունների համար պահպանվում է ոչ վատ հեռանկար, թեեւ ես հիացած չեմ դրանց անցկացման եղանակից: Ներկայումս հարցն այսպես է դրված. դուք դադարեցնում եք հարստացման աշխատանքները, եւ այդ դեպքում մենք սկսում ենք բանակցությունները: Բայց դա արդյունավետ չէ. հենց աշխատանքների դադարեցումը պետք է լինի բանակցությունների առարկա առաջին փուլում:

Չարդ-Ձեզ չի՞ տագնապեցնում միջազգային հարաբերությունների մթնոլորտը: Ռազմական ուժը վերադառնում է որպես առանցքային գործոն: ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը հաճախ են դիմում սառը պատերազմի ճարտասանությանը: Դա հետ գլորվե՞լ է, թե՞ հակառակը՝ նոր դարաշրջանի սկիզբ:

Պատ.—Վաշինգտոնի կառավարող վերնախավն ավանդաբար բաժանված է երկու մասի: Ռազմական վերնախավը, Պենտագոնի գլխավորությամբ, հնուց ի վեր կարելու է խաղացել, իսկ Ջորջ Բուշ-կրտսերի վարչակազմի օրոք ուժեղացրել է իր ազդեցությունը: Սակայն միշտ եղել է նաեւ արտաքին քաղաքական վերնախավ՝ Պետդեպարտամենտը: Այն քիչ է կողմնորոշված դեպի ուժը: Երկրորդ միտումը, անշուշտ, ամրապնդվեց շնորհիվ նրա, որ Ռուսաստանը դադարեց իրենից վտանգ ներկայացնել: Լարվածության թուլացումը հնարավորություն ստեղծեց աշխարհը կազմակերպել միջազգային համագործակցության եւ սպառնալիքի դեմ համատեղ պայքարի սկզբունքներով:

Մրցակցության անհետացման հետ միաժամանակ զինվորականների մոտ կորավ որեւէ զիջման գնալու, իրենց սահմանափակելու անհրաժեշտությունը: Ձինվորականները, եթե կարելի է այսպես ասել, դադարեցին «քաշվել»: Դա սկսվեց դեռ Բիլ Բլինթոնի օրոք. Աֆղանստանի ռմբահարումները, Քենիայում ու Տանզանիայում ամերիկյան դեսպանատների վրա հարձակումներից հետո Սուդանին հարվածները: Երբ պարզվեց, որ Սուդանում գործարանը սխալմամբ են ռմբակոծել, պարզապես ափսոսանք հայտնեցին: Միակ ռազմական գերտերության հոգեբանություն է: Իսկ ինչո՞ւ են այսօր մշակվում միջուկային զենքի եւ նրա փոխադրման նոր տեսակներ. դա չի բացատրվում ահաբեկչության դեմ պայքարի անհրաժեշտությամբ, դա առճակատման տիպի ռազմավարական մտածողություն է:

Չակահրթիռային վահանի գաղափարը, որի մասին ներկայումս շատ են խոսում, չափազանց հին է: Այն ի սկզբանե Մոսկվայի ու Պեկինի մոտ կասկած է առաջացրել, թե ԱՄՆ-ը ցանկանում է իր համար ապահովել անպատիժ հարված հասցնելու հնարավորություն: Իհարկե, սա էլ է այն նույն ռազմավարական մտածողության տարրը, որը չի նախատեսում «ընդհանուր տան» կառուցում: Վաշինգտոնը վստահեցնում է, որ ծրագրերն ուղղված են Իրանի եւ Չյուս.Կորեայի դեմ, բայց չի թվում, թե ինչ-որ մեկը դրան հավատա: Երկու կոնկրետ օբյեկտները Լեհաստանում ու Չեխիայում, թերեւս, իսկապես չեն սպառնում Ռուսաստանին: Բայց չէ՞ որ նրանք լինելու են ընդհանուր համակարգի մաս, իսկ դա արդեն շատ է անհանգստացնում եւ Ռուսաստանին, եւ ՉԺՅ-ին:

Մյուս տարրը ՆԱՏՕ-ի ընդարձակումն է: Այն սկսել է Լեհաստանով, Չեխիայով, Յունգարիայով՝ Խորհրդային Միության կողմից օկուպացված երկրներով, ու ես փայլուն հասկանում եմ, թե ինչու նրանք եւ Բալթիայի պետությունները ձգտում են դեպի դաշինքը: Մյուս կողմից՝ ես հասկանում եմ նաեւ Ռուսաստանի զգացումը. հենց մենք հեռացանք, այնտեղ գրեթե իսկույն մտավ ՆԱՏՕ-ն: Այսպես է սնուցվում մրցակցության հոգեբանությունը: Այժմ արդեն խոսքն Ուկրաինայի ու Վրաստանի մասին է, իսկ նախորդ տարի սենատոր Ռիչարդ Լուգարը կարծիք հայտնեց, թե դռները պետք է բաց լինեն Ադրբեջանի եւ Ղազախստանի համար:

Միանգամայն բացատրելի է՝ ինչու է Ռուսաստանը զգում, թե իրեն կարծես շրջապատում են, առավել եւս, որ նավթի ու գազի աղբյուրների համար պայքարի տեսանկյունից, սկզբունքորեն, այդպես էլ կա: Վերջերս Յենրի Բիսինջերն իր հողվածում հիշեցնում էր, որ պաշտպանել է ՆԱՏՕ-ի ընդարձակման առաջին ակիքը, սակայն դեմ է այդ գործընթացի շարունակմանը: Նա, համենայն դեպս, հոգեբանություն հասկանում է, գեներալները հոգեբանություն բացարձակապես չեն հասկանում ու չեն էլ ուզում հասկանալ...

Ինչ վերաբերում է Չինաստանին, ապա ԱՄՆ-ը ուշադրություն է դարձնում նրա ռազմական ծախսերի ավելացմանը, որոնք տարեկան կազմում են 45 մլրդ դոլար: Սակայն իր սեփական ծախսերը գերազանցում են 600 միլիարդը: Միաժամանակ պայմանագրեր են ստորագրվում Դելիի հետ, որոնք դժվար է այլ կերպ մեկնաբանել, քան Յնդկաստանին հակաչինական «պատնեշի» մեջ ներգրավելու ձգտում, որն արդեն ներառել է Ավստրալիան, Ճապոնիան, Ֆիլիպինները, Թայվանը...

Այսպիսի մոտեցման հիմքում ռազմաստրատեգիական հնաոճ մտածողությունն է, որն արդեն իր ողջ «գեղեցկությամբ» հանդես է եկել 2003թ. իրաքյան կամպանիայում: Մերձավոր Արեւելքի վերակառուցման նեոպահպանողական գաղափարը մոտավորապես հետեւյալն էր. վերացնելով սրիկա Սադամին՝ մենք կկարողանանք ռազմական զորամասերը Սաուդյան Արաբիայից վերաբազավորել Իրաք, որտեղ առավել բարենպաստ աշխարհիկ միջավայր է, բացի այդ, կողքին Իրանն է, որը կլինի հսկողության տակ: Իրականում պատերազմը ցույց տվեց, որ միայն ուժով խնդիրներ չեն լուծվում:

(տպագրվում է կրճատումներով)

«Россия в глобальной политике», № 3, 2007

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

(Սկիզբը՝ թիվ 48)

Ազգային գիտակցութեան, ժողովուրդի մը հոգեւոր միութեան համար էական գործօն է ե՛լ կրօնը: Կար ժամանակ, որ կրօնի նշանակութիւնը շա՛տ աւելի մեծ էր, որովհետեւ ան իր մէջ կ'ամփոփէր ժողովուրդի հոգեւոր բովանդակութեան ամբողջութիւնը - իմացական - ապրումնային բոլոր ա՛յն ոգորումները, որոնք այսօր անջատօրէն կ'արտայայտուին իմաստասիրութեան, գեղարւեստի եւ գիտութեան մէջ:

Վերոյիշեալ ազդակները որպէս ժողովուրդի հոգեկան միութեան տարրեր՝ իրենց արտացոլումն ունեցած են անոր կենցաղավարութեան, բարոյական եւ կրօնական զգացումի, գեղարւեստի, իմաստասիրութեան, ընկերային եւ քաղաքական կեանքի, երգ ու երաժշտութեան, կարճ՝ բովանդակ ստեղծագործութեան մէջ: Ահա՛ թէ ինչո՞ւ ազգային գիտակցութեան քննադատական ձեւը կ'ենթադրէ ո՛չ միայն ազգային ոգիի եւ ասոր բոլոր առանձնայատկութիւններու գիտակցումը, այլեւ անոնց պահպանումի եւ մշակումի կամքը՝ որպէս օրգանական զարգացման հիմք, ոգիէն դէպի ազգը, ներսէն, էութենէն դէպի դուրսը, դրսերելոյթը: Այսպիսի զարգացումն է միայն ստեղծագործական եւ առողջ: Մարդկութեան ընդհանրութեան գաղափարը, որու կրողը հանդիսացաւ աշխարհաքաղաքացիութիւնը, չունի զարգացման հիմք: Բաղդատմամբ ազգային ֆիզիքական եւ հոգեկան բնիմաստ եւ իւրարժէք ընդհանրութեան՝ աշխարհաքաղաքացիութիւնը կը մնայ վերացական գաղափար մը: Այս գաղափարը չի կրնար ջնջել ազգային զգացումի կենսաբանական հիմքը, ո՛չ ալ ազգային ոգիէն դատարկել այն բովանդակութիւնը, որ դիզուած է դարերու փորձառութիւններով եւ պատմական ճակատագրի նոյնութեամբ: Աշխարհաքաղաքացիական միութիւնը ստեղծուած է մտայնօրէն. ան մտացածիւն է եւ ո՛չ թէ գոյզացական, ուստի եւ չի կրնար հանդիսանալ ստեղծագործական ազդակ, որովհետեւ ստեղծագործութիւնը կ'ենթադրէ բնա-հոգեբանական որակ մը, այո՛, սուբստանցիէլ ոյժ մը եւ ո՛չ լոկ գաղափարական ընդհանրութեան ըմբռնում մը: Պատահականութիւն չէ, որ գրական, գեղարւեստական թէ այլ կարգի ամեն կարեւոր ստեղծագործութիւն, մի՛շտ ալ ազգային եղած է:

Ազգային գիտակցութեան աւելի՛ բարձր ձեւը ժողովուրդի անհատականութեան գաղափարն է, անոր ինքնարժէքութեան զգացումը: Ինչպէս որ անջատ մարդը աստիճանական զարգացումով կը յանգի այն

հասկացողութեան, թէ ինքն առանձնայատկութիւններ ունի, որոնցով կը տարբերի ուրիշ անհատներէ եւ որոնք կը սահմանեն իր ինքնարժողութիւնը, այդպէս ալ ոգիի արթնութեան եւ մշակեալ ըմբռնումներու տէր ժողովուրդները ունին ազգային գիտակցութիւնը՝ իրենց անփոխարինելիութեան, անկրկնելիութեան: Եւ ճիշդ ազգի մը ինքնարժեքութիւնը սահմանող այդ առանձնայատկութիւններն են, որոնք իբր ընդունակութիւն-արժեքներ ի պահ կը դրօն մարդկութեան ընդհանուր գանձարանին մէջ՝ որպէս տւեալ ազգի բաժինը: Ի հարկէ ազգային ամեն ընդունակութիւն չունի իր մեծ նշանակութիւնը եւ չի կրնար սահմանել ինքնարժեքութեան գիտակցութիւնը: Ինչպէս անհատը բնագոյաբար կը զգայ, որ միայն ինքն ունի արժանաւոր այն ընդունակութիւնները, որոնցմէ հասարակութիւնը շահ ունի, այդպէս ալ ազգը ինքը կը զգայ ու կը գնահատէ այն, ինչ որ կը շեշտէ իր արժանիքը եւ կը գրաւէ ուրիշ ժողովուրդներու ուշադրութիւնը: Ասկէ առաջ կու գայ բարոյական բնութագծի ինքնարժեքութեան գիտակցութիւնը: Այս գիտակցութիւնը իր մէջ կը պարփակէ ինքնայարգանքի զգացումը, առանց որու բարոյական չկայ: Միայն ինքնայարգանքի զգացում ունեցողը մաքուր կը պահէ իր խիղճը եւ չի գործեր ասոր հակասող քայլեր. նմանը միայն կրնայ ուրիշներէն յարգանք սպասել: Այսպիսով՝ ազգային ինքնարժեքութեան զգացումը կը դադարի զուտ ցեղային-հոգեբանական գաղափար ըլլալէ եւ կը վերածուի բարոյական որակի: Աւելորդ է բացատրել, թէ ի՞նչ մեծ նշանակութիւն կ'ունենայ բարոյական նման բովանդակութեամբ ազգային գիտակցութիւնը՝ ազգի մը ներքին կեանքի եւ անոր միջազգային յարաբերութիւններու տեսակետով:

Ազգային ինքնարժեքութեան, որով եւ ինքնայարգանքի զգացումը կ'ենթադրէ ազգային անկախութեան պահանջ: Այս անկախութիւնը նոյնպէս ազգային գիտակցութեան բաղկացուցիչ մէկ մասն է: Բաղկացուցիչ այն իմաստով, որ ազգային առողջ գիտակցութիւնը միշտ ի յայտ կուգայ որպէս հոգեբանական եւ բարոյական պայման նւաճումի կամ ազգային հոգեւոր թէ քաղաքական անկախութեան պահպանման: Պէտք չէ, ի հարկէ, մտածել, թէ անկախութեան ձգտումը կը յենուի բացառաբար ինքնարժեքութեան գիտակցութեան եւ ինքնայարգանքի զգացումի վրայ: Այս վերջինները աւելի յենարաններ են անկախութեան ձգտումի, որ աւելի խոր կերպով արմատացած է ինքնապահպանումի բնազդի մէջ: Այդ պատճառով ալ ժողովուրդի մը ինքնարժեքութեան զգացումի տկարացումը, անոր անտարբերութիւնը՝ անկախութեան պրոբլեմի հանդէպ կամ անոր հակումը իր անկախութիւնը մասամբ կամ ամբողջութեամբ զոհելու՝ հիւանդութեան կամ այլասերումի նշան է: Միեւնոյն պատճառով պատմական որեւէ ցնցում, որ կասկածել կը մղէ

ենթակային՝ սեփական ոյժերու վրայ կամ յուսալքում յառաջ կը բերէ - նման ցնցումներու պատճառած ապրումները կը հարւածեն ազգային գոյութեան կենսաբանական ջիղը:

Ինչպէս անհատի, նոյնպէս եւ ժողովուրդներու համար ինքնապահպանման ձգտումը ո՛չ միայն բնական մղում է, այլեւ բարոյական պահանջ: Իւրաքանչիւր ազգ, շնորհիւ իր անհատականութեան, ունի իր առանձնայատուկ պատմա-մշակութային առաքելութիւնը եւ ո՛չ մէկը կը գտնուի «Աստուծոյ ճանապարհին», որ կ'ուզէ ժխտել միւսի ինքնարժէքութեան եւ ինքնայայտութեան իրաւունքը: Աւելին. ինչպէս անջատ մարդը՝ իր կեանքի մէջ նպատակի մը կրնայ հասնիլ իր ազգակիցներու օժանդակութեամբ, այդպէս ալ ժողովուրդ մը կրնայ պատմական իր առաքելութիւնը իրականացնել ուրիշ ժողովուրդներու աշխատակցութեամբ - աշխատակցութեամբ, բայց ո՛չ հպատակեցումով, գերումով: Այս տեսակետով ժողովուրդներու փրկութիւնը եւ իդէալական դրացիութիւնը հնարաւոր է միայն այն ատեն, երբ կ'ապահովուի անոնցմէ իւրաքանչիւրի, որով՝ բոլորի ազգային անհատականութիւնը, երբ կը վերացնուի անոնց պատմական զարգացման ճանապարհին ինկած խոչընդոտները: Իսկականապէս լուսաւորեալ ազգային զգացումը կը բովանդակէ այս իդէալը:

Ազգային գիտակցութեան երրորդ հիմնական բաղկացուցիչ տարրը անջատ ազգակիցներու համերաշխութիւնն է: Հասարակութեան մը պատկանելու համար ամեն բանէ առաջ անհրաժեշտ է համերաշխութեան զգացումը: Ասիկա հիմնական նշանակութիւն ունի ազգային ընդհանրական կեանքի բարոյական բովանդակութեան տեսակետով, եւ ասով է, որ կը չափենք ժողովուրդի մը բարոյականը, անոր հասարակական կարգապահութիւնը: Ազգային համերաշխութեան գաղափարը կ'ենթադրէ անհատի փաստացի ենթարկումը՝ հաւաքական ընդհանրութեան: Սերտ կապ կայ անհատի եւ ժողովրդի ճակատագրի միջեւ: Մասնաւորապէս աղէտներու ժամանակ այս ճակատագիրը միեւնոյնն է բոլորի համար: Վերջին հաշւով՝ անհատի ապահովութիւնը, բարիքը, չարիքը, արարքներու արդարացումը, յաջողութիւնը, ծախողանքը կախում ունի ժողովուրդի բարոյական վիճակէն, կարծիքէն, վերաբերումէն, դատաստանէն: Անհատը այն ատեն միայն իրաւունք ունի հակասութեան մէջ գտնուիլ հասարակութեան հետ, երբ բարքերու շօշափելի անկում կայ եւ հասարակութիւնը դէպի գոյութեան աւելի բարձր ձեւ մը մղելու պահանջ: Նման պարագաներուն հոգեւոր մեկուսացումը ողբերգական բնոյթ կը ստանայ եւ անյեղաշրջելի ժողովուրդի հետ կը խորտակուի նաեւ անհատը: Հոս ալ ազդու է կապը ճակատագիրներու միջեւ: Այդ կապը ամենապարզ կերպով կը զգացուի, երբ անհատը կը կտրուի իր միջավայրէն եւ ինքզինքը կը գտնէ օտար ազգային

ընդհանրության մեջ: Հոս եւս հոգեւոր մեկուսացումը ողբերգական բնոյթ կը ստանայ: Գաղթականի, տարագրի, մանաւանդ պանդուխտի հոգեբանութիւնը շատ հրահանգիչ է այս ուղղութեամբ:

Անհատի ենթարկումը՝ ժողովուրդի ընդհանրության, կը գիտակցւի ազգային համերաշխութեան գաղափարով: Այս գաղափարը կը բովանդակուի ազգային գիտակցութեան մէջ եւ կը վերածուի ժողովրդական գործօն կամքի: Ազգային գիտակցութեամբ է, որ քաղաքացիները մասնաւորապէս վտանգի առեւն կը մղուին բարոյական ոյժերու պրկումին, անձնւիրաբար նետուելով պատերազմի կրակին մէջ: Հոս՝ անհատը կը զգայ ազգային ինքնարժէքութեան ծառայելու, պահակելու իր դերը - դեր մը, որ կը զօրացնէ հաւաքական ճակատագրի գիտակցութիւնը եւ կը շեշտէ միութեան զգացումը: Բարոյական ոյժերու լարումի շնորհիւ է, որ ռազմիկները յատկապէս զգայուն են անեն կարգի աններդաշնակութեանց եւ անիրաւութիւններու հանդէպ, ուստի թիկունքը պարտաւոր է բարոյապէս միշտ արթուն գտնուիլ՝ գիտակցելով, որ իր կեցւածքը վճռական ազդեցութիւն ունի ճակատ գտնուող ռազմիկներու տրամադրութեան, որով եւ՝ պայքարի ելքի վրայ: Այսպէս՝ պատմական որեւէ յաջողութեան հիմքը ազգային գիտակցութեամբ պայմանաւորուած համերաշխութեան կամքն է:

Անշատ անհատի համար ժողովուրդի ընդհանրութիւնը «անուղղակի առարկայ» է: Անոր եւ ընդհանրութեան միջեւ յարաբերութիւնները «շարժանիքներ» են, որոնք կը սահմանեն անոր «ընկերային ընթացք»ը, կենցաղակերպը, աշխարհայեացքը: Բարոյական իրաշունչ այս մթնոլորտը չի կրնար ստեղծուիլ համամարդկային որեւէ ընդհանրութեան կողմէ: Բարոյական գիտակցութեան համար, ըստ ինքեան, սահման չկայ, բայց գործնական կեանքի մէջ անոր ստացած արտայայտութիւններուն համար մասնաւոր նշանակութիւն ունի ժողովուրդի ընդհանրութիւնը: Բարոյական ամեն արժէքի եւ գործի չափանիշը ազգային խղճմտանքն է: «Մարդկութիւն»ը, հակառակ ժողովուրդներու միջեւ գոյութիւն ունեցող նիւթական եւ հոգեկան կապերու, կը շարունակէ մնալ տրամաբանական վերացականութիւն մը կամ լաւագոյն պարագային հեռաւոր, անձայրածիր նպատակ մը, որ անհատի գործնական կեանքի համար էական նշանակութիւն չունի: Անհատը սեփական իր ժողովուրդի մէջ միայն ունի խստօրէն որոշուած իր տեղը եւ հոս է, որ ան միշտ կանգ կ'առնէ ընտանեկան, հասարակական, պետական կեանքէն բխած բարոյական պարզ ու որոշ խնդիրներու առջեւ: Ազգային ընդհանրութիւնը, անհատի հետ ունեցած կենդանի իր յարաբերութիւններով, կը հսկէ ասոր բարոյական ընթացքի վրայ, մարդկութիւնը, սակայն, չի կրնար անհատին պարտադրել նման անուղղակի ենթակայութիւն կամ մօտէն հսկել անոր բարոյական ընթացքին:

Ազգային համերաշխության զգացումը իր բովանդակած բարոյական պարտականություններով երեւան կուզայ որպէս լաւագոյն հիմքը հասարակական եւ պետական կեանքի: Եթէ պետութեան մը մէջ քաղաքացիները իրենց փոխադարձ յարաբերութիւնները, ինչպէս նաեւ իրենց դիրքը հանդէպ պետութեան, պայմանաւորէին միայն այն բաներով, որ օրէնքները կը թելադրեն եւ եթէ բացի այդ օրէնքներէն չունենային բարոյական ուրիշ հակակշիռներ կամ չխանդավառուէին իրենց գործերով եւ նպատակներով - նման պարագային չէր կրնար գոյութիւն ունենալ որեւէ պետութիւն:

Այսպէս՝ ազգային գիտակցութիւնը ո՛չ միայն կենսաբանական եւ ցեղային արտայայտութիւն է, այլեւ բարոյական ոյժ, որ անընդհատօրէն պէտք է մշակուի, եթէ ժողովուրդը մը կ'ուզէ զարգանալ եւ ամրապնդուի: Առանց ազգային գիտակցութեան՝ արժէք եւ զօրութեանականութիւն չունի որեւէ պետութիւն կամ օրէնք. առանց ատոր ժողովուրդը կը տկարանայ, կը կազմալուծուի եւ ժամանակի ընթացքին՝ պատմականօրէն կը մեռնի:

Ազգային գիտակցութեան մշակումը հաւաքական եւ անհատական բարոյականի տեւական գործը պիտի ըլլայ: Եւ ճիշդ ատոր մէջ է ազգային դաստիարակութեան իմաստը: Ազգային դաստիարակութիւնը չի կայանար միայն ազգային ոճի եւ ձեւի մշակման, այլեւ անհատի ընկերային զգացումի եւ բարոյական գիտակցութեան դարբնումի մէջ: Որովհետեւ անհատներու յարաբերութիւններու եւ գործերու բնոյթով է, որ ժողովուրդի ընդհանրութիւնը կը դիմագծուի, կը կառուցուի եւ կ'ամրապնդուի որպէս բարոյական անձնաւորութիւն: Պատմութիւնը կ'ուսուցանէ, որ դարագլխի մը հիմնաքարին վրայ, ուր հոգեւոր մեծ ցնցումի մը հետեւանքով կը շեշտուի ազգային գիտակցութիւնը, ծնունդ կ'առնեն ժողովուրդի մը մեծ ներկայացուցիչները: Նման անձնաւորութիւններն են նոյն ժողովուրդի հարազատ ղեկավարները, անոնց ոյժն ու հմայքն են, որ կը գրաւեն ժողովուրդի սիրտը, միտքը եւ կամքը, որովհետեւ ատոնց խօսքերը պատգամներ են՝ բղխած ուղղակի ազգային գիտակցութեան հողէն: Ասիկա կը նշանակէ, որ ժողովրդական վարիչներ, ղեկավար մտաւորականներ ստեղծելու ճամբան ազգային դաստիարակութեան, ազգային գիտակցութեան պահպանման, հասնող սերունդներու բարոյական վերանորոգման ճամբան է:

«ՏԱՐՕՆԻ ԱՐԾԻԻ»,

Սոֆիա, 1939թ.

**Քայել Մարգարողլու. «ԿԱՆ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐ,
ՀԱՏԿԱՊԵՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԵՋ,
ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ԲԱՑԱՀԱՅՏ ՀԱՅ ԵՆ ՀԱՄԱՐՈՒՄ»**

*(Ստամբուլում բնակվող համշենցի Քայել Մարգարողլուի
հարցազրույցը հատուկ «Հանրապետական» ամսագրի համար)*

–Ի՞նչ կարող ես ասել ներկայիս Թուրքիայում ապրող համշենահայերի քանակի մասին:

–Թուրքիայում ներկայումս մոտավորապես 50 000 համշենցի է ապրում: Համշենցիների մի մասն ապրում է Սել ծովի արևելյան ափերին, մի մասը Ադափազարի շրջանում, համշենցիներ կան նաև Թուրքիայի խոշոր քաղաքներում՝ Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում:

–Ինչպիսի՞ն է լեզվի վիճակը, պահպանվե՞լ է արդյոք Համշենցի բարբառը:

–Երեւի գիտեք, որ համշեներենը¹ ներկայումս միայն Հոփայի խմբի համշենցիների մոտ է պահպանվել, մյուս խումբը՝ չամլըհենշինցիները, իրենց լեզվում պահպանել են որոշ բառեր, անձնանուններ, տեղանուններ, ինչպես նաև մշակութային տարրեր: Մենք՝ Հոփայի խմբի համշենցիներս, նախկինում թուրքերեն իրականում սովորում էինք միայն դպրոցում, իսկ տանը գերազանցապես համշեներենն էր օգտագործվում: Հիմա էլ վիճակն ընդհանուր առմամբ այդպես է, սակայն վերջին տարիներին, այնուամենայնիվ, որոշ փոփոխություններ նկատվում են: Այսպես. որպեսզի երեխաները դպրոցում շատ հետ չընկնեն, հիմա սկսել են նաև տանը նրանց հետ ավելի շատ թուրքերեն խոսել եւ, օրինակ, ներկայիս երեխաներն իմ սերնդի չափ համշեներեն չգիտեն: Բացի այդ, թուրքական հեռուստատեսությունները, ֆիլմերը եւս նպաստում են թուրքերենի ավելի շատ օգտագործմանը: Սակայն ներկայումս էլ ավագ սերնդից մարդիկ կան, որոնք գրեթե չեն կիրառում թուրքերենը, դա կապված է նաև նրանց կյանքի ներփակ բնույթի հետ, իսկ երիտասարդների մոտ, որոնք սովորում են համալսարաններում կամ աշխատում են

¹ Տեքստում միտումնավոր թողել ենք «համշեներեն» եզրը, քանի որ այդպես էր օգտագործում մեր զրուցակիցը (Ռ.Մ.):

մեծ քաղաքներում, վիճակն այլ է: Վերջերս նկատվում է մեկ այլ միտում եւս. նրանք, ովքեր իրենց էթնիկ պատկանելության մասին իմանում են, անպայման ջանում են սովորել եւ կիրառել համշէներեն, ավելին՝ այն սովորեցնել իրենց երեխաներին:

–Չամշէնցիների մյուս խումբը՝ արեւմտյանը, ինչպե՞ս է, որ չի պահպանել իր մայրենին՝ ի տարբերություն Յոփայի խմբի:

–Իմ ենթադրությամբ՝ դա կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ Յոփայի խումբն ավելի շատ բնակվում է գյուղերում, քաղաքների հետ շատ առնչություն չունի, այսինքն՝ ավելի ներփակ է ապրում, եւ միայն վերջին 20 տարիներին է, որ սկսել է հարաբերվել դրսի աշխարհի հետ: Կյանքի այս ներփակ բնույթը, ներքին ամուսնությունները եւ այլն նպաստել են լեզվի պահպանմանը: Մյուս ենթադրությունս այն է, որ մեր խումբն ավելի ուշ է մուսուլմանություն ընդունել, իսկ արեւմտյանը՝ ավելի վաղ, եւ լեզվի կորուստը միգրացե նաեւ դրա հետ կարելի է կապել:

–Ինչպիսի՞ն են հարաբերությունները երկու խմբերի միջեւ:

–Լավ են, սակայն մի բան ասեմ. երբ համշէնցիների հայ լինելու մասին քննարկումներ կամ վեճեր են սկսվում, արեւմտյան համշէնցիներն ասում են. «Ոչ թե մենք, այլ Յոփայի համշէնցիներն են հայ»:

–Ինչպիսի՞ն է կրոնի դերը համշէնցիների մոտ:

–Չայտնի է, որ Թուրքիայի համշէնցիները մուսուլման են, բայց իսլամը շատերիս համար մեծ կարեւորություն չունի, կրոնն ավելի շատ ֆոն է, այն մեր առօրյա կյանքի վրա շատ մեծ ազդեցություն չունի, շատ կրոնասեր չենք: Նշեմ, որ համշէնցիները չեն հետեւում իսլամի որոշ սկզբունքների, օրինակ՝ խմում են ալկոհոլային խմիչքներ, խոզի միս ուտում, մզկիթ հաճախ չեն գնում: Չամշէնցիները քրիստոնյա եղած ժամանակ էլ շատ կրոնամոլ չեն եղել: Ավելացնեմ նաեւ, որ Չամշէնում մզկիթներ սկսել են կառուցել առավելապես վերջին երկու տասնամյակում: Սակայն կարծում եմ, որ համշէնցիների կրոնի մեջ եւ առօրյա կյանքում քրիստոնեության որոշ տարրեր, այնուամենայնիվ, մինչեւ հիմա էլ կան:

–Այո, հայտնի է, որ քրիստոնեության եւ նախաքրիստոնեական հայկական հավատքի որոշ տարրեր կան համշէնցիների մոտ, հենց միայն, օրինակ վարդավառը, տրընդեզը: Իսկ ուրիշ ի՞նչ այլ հետաքրքիր օրինակ կարող ես նշել:

–Օրինակ, հարսանիքից հետո տուն մտնելիս փեսան դռան վերելը դանակով խաչ է գծում, ավելի ճիշտ, ոչ թե խաչ, այլ խաչը խորհրդանշող չորս խազ է անում:

–Իսկ ինչպիսի՞ն է ազգային ինքնագիտակցության խնդիրը համշենցիների մոտ:

–Երիտասարդները եւ կրթված, գրագետ մարդիկ ինքնության խնդիրը գիտեն, տեղյակ են, մեծահասակների մի մասն այդ փաստը չի ընդունում, սակայն սա կարող է պայմանավորված լինել նաեւ անտեղյակությամբ: Նշեմ, որ հատկապես Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ հայաստանցի հայերը սկսեցին Վրաստանի տարածքով Թուրքիա գալ-գնալ, եւ երբ համշենցիները սկսեցին շփվել, խոսել, տեսան, որ լեզուն նույնն է, նրանց մոտ ինչ-որ բան փոխվեց, ինչ-որ բան սկսեցին հասկանալ: Սակայն կան համշենցիներ, հատկապես երիտասարդների մեջ, որոնք իրենց բացահայտ հայ են համարում:

–Իսկ իրական էթնիկ պատկանելությունը մերժելու գործում արդյոք դեր չունի՞ Թուրքիայում ձեւավորված վախի մթնոլորտը:

–Ես կարծում եմ, որ դա ոչ թե այժմյան վախի մթնոլորտի, այլ ավելի շատ անցյալի, այսինքն՝ ենթագիտակցական մի վախի ազդեցության արդյունք է: Կան համշենցիներ, որոնք, իմանալով հանդերձ իրենց իրական էթնիկ պատկանելությունը, աշխատում են այդ մասին շատ չխոսել՝ խուսափելու համար ավելորդ բարդություններից. օրինակ՝ թուրքի հետ առեւտրով զբաղվող կամ համատեղ բիզնես ունեցող մարդուն դա կարող է եւ վնաս պատճառել, այսինքն՝ ինքնությունը թաքցնելու ուղղակի ճնշումներ չկան, բայց այսպիսի անուղղակի ճնշումներ հնարավոր է լինեն: Մի խումբ համշենցիներ էլ մտածում են, որ միեւնույն է՝ այսքան դարեր են անցել, իրենք փոխվել են, հիմա վեր կենան, ասեն հայ են, ի՞նչ պիտի փոխվի:

–Ամուսնության խնդիրը ինչպե՞ս է համշենցիների մոտ, պահպանվո՞ւմ է արդյոք ներքին ամուսնությունների ավանդույթը, թե՞ դա արդեն խախտվել է:

–Ներկայումս էլ շատ են ներքին ամուսնությունները, նախկինում ընդհանրապես դրսից ոչ մեկի հետ չէին ամուսնանում: Սակայն վերջին տարիներին վիճակը մի փոքր փոխվել է, հատկապես մեծ քաղաքներում ապրող երիտասարդներն ամուսնանում են թուրքերի, քրդերի, մի խոսքով՝ օտարների հետ, սակայն Համշենում այդպես չէ եւ ամուսնանում են

գերազանցապես համշենցիների հետ. օրինակ՝ իմ եղբայրը, որ ապրում է Չամշենում, ամուսնացել է համշենցու հետ, իսկ Ստամբուլում ապրող քույրս՝ քրդի հետ:

–Իսկ Թուրքիայի հայերի հետ ամուսնանո՞ւմ են:

–Գիտես, մենք Թուրքիայի հայերին նախկինում շատ չէինք ճանաչում, շփվում, նոր-նոր է, որ սկսում ենք իրար ճանաչել: Նրանք էլ են սկսել հետաքրքրվել համշենցիներով, Չամշենով, գալիս են, գնում: Ամուսնության խնդրին գալով՝ ասեմ, որ կարող է համշենցին ամուսնանալ ստամբուլահայի հետ, սակայն ինչ պետք է լինի հետո, երբ երեխա ծնվի, այդ երեխան եկեղեցում պետք է կնքվի, թե ոչ, այսինքն՝ սա կախված է կոնկրետ անձերից եւ կրոնի հանդեպ ունեցած նրանց անձնական վերաբերմունքից:

–Չամշենցիներն ի՞նչ են մտածում Չայաստանի մասին, այն համարո՞ւմ են արդյոք նախկին հայրենիք կամ բնօրրան:

–Ոչ, նման բան չկա, սակայն շատ են ցանկանում գալ, տեսնել, որովհետեւ հետաքրքրվում են լեզվով եւ միգրացե, եթե ինքնության մասին կասկածներ ունեն, նաեւ դա փարատելու համար: Սակայն եթե անկեղծ ես ուզում իմանալ, ապա Չայաստանը որպես նախկին հայրենիք չեն ընդունում, այդպիսի բան չկա, իրենց հայրենիքը նրանք համարում են սեւծովյան ափերը, որովհետեւ իրենց հայրերը, պապերը այդտեղ են ծնվել, այդտեղ ապրել:

–Սակայն մինչեւ սեւծովյան ափերը գալը որտե՞ղ են ապրել, խոսքս դրա մասին է:

–Բայց քո նշած դեպքից ինչքա՞ն է անցել, շուրջ 1200 տարի, համշենցիներն իրենք իրենց արդեն այս սեւծովյան մշակույթի կրողներ են համարում եւ ոչ՝ հայաստանյան:

–Իսկ ի՞նչ են մտածում համշենցիները Չրանտ Դինքի սպանության մասին:

–Չրանտը խիզախ խոսող մարդ էր եւ այնպիսի բաներ էր ասում, որ շատերը կվախենային դա ասել: Նա ասում էր, որ մինչ 1915-ը այստեղ ապրող 1 500 000 հայերը չկան, ի՞նչ եղան, ո՞ւր են: Չայտնի է, որ թուրքական պետությունը ժողովրդից շատ բաներ, ներառյալ եւ այս հարցը, փակ է պահում եւ հրամցնում միայն պաշտոնական տեսակետները, եւ ահա Դինքը նպաստեց, որ այս հարցն ավելի մասսայական

քննարկվի, ու շատ բաներ սկսեցին ի հայտ գալ, շատերի համար մինչ այդ անհայտ բաներ պարզվեցին: Եթե դեպքերն այս հունով զարգանան, չի բացառվում, որ մի օր մեծ թվով մարդիկ իրենց մեջ ուժ կգտնեն ասելու, որ 1915-ին տեղի ունեցածների համար պետք է ներողություն խնդրել: Դինքի սպանությամբ փորձ արվեց նաեւ հարված հասցնել այս տենդենցին, բայց տեսա՞ք, թե ինչ եղավ նրա մահից հետո, երբ 100 000 մարդ դուրս եկավ փողոց: Սպանության գիշերն առաջինը հազարավոր ծախակողմյաններ դուրս եկան փողոց, եւ նրանք հայեր չէին: Ես քեզ ասեմ, որ Թուրքիայի հայերի մեծ մասը զգուշավոր է. նրանք միշտ ասում են՝ չխոսենք, չասենք, որ հայ ենք, մարդ չլսի, չիմանա, այսինքն՝ փոքրամասնության հոգեբանությունը միշտ ուղեկցում է նրանց:

–Այո, նման վարքագծի ես անծանր եմ ակամատես եղել Ստամբուլում, երբ ինձ ուղեկցող ստամբուլահայը հասարակական վայրերում առաջարկում էր չխոսել հայերեն, որ կողքից հանկարծ չլսեն, չիմանան, որ հայ ենք:

–Դա սխալ պահվածք է: Օրինակ՝ մի դեպք պատմեմ ինձ հետ կապված: Մի երկու տարի առաջ իմ թուրք գործընկերը, ում հետ այդ ժամանակ աշխատում էի, շատ գոհ լինելով ինձնից՝ հարցրեց, թե որտեղի՞ց եմ: Ես էլ ասացի համշենցի եմ, հարցրեց՝ համշենցիները ովքե՞ր են, լա՞զ են, պատասխանեցի, որ նախկին հայեր են, նա էլ զարմացած ասաց. «Անհնար է, դու չես կարող հայ լինել, որովհետեւ դու շատ լավ մարդ ես»: Ես էլ նրան զայրացած հարցրի. «Դու այդ քանի՞ հայ ես ճանաչում, որ նման կարծիքի ես»: Նա էլ պատասխանեց. «Ոչ մի, ես գրքերում եմ դա կարդացել»: Մեր այս զրույցից հետո նրա մոտ ինչ-որ բան փոխվեց, երեւի զգաց, որ սխալ էր մտածում: Այսինքն՝ չխոսելը սխալ է: Ահա Դինքն այս պատկերացումները եւ մտածելակերպը կոտրեց: Նրա սպանության երեկոյան ծախերը սկսեցին հավաքվել եւ այն էլ բավական մեծ թվով, այնուհետեւ հայերն էլ սկսեցին միանալ: Թուրքիայի տարբեր վայրերում բողոքի ակցիաներ եղան՝ Անկարայում, Իզմիրում, այլուր:

–Իսկ Չամշենում Դինքի սպանության հետ կապված ինչ-որ միջոցառում եղա՞վ:

–Չամշենում բողոքի ակցիա չեղավ, բայց շատ համշենցիների եմ ես տեսել թաղման արարողության եւ Ստամբուլի բողոքի ցույցի ժամանակ, որին անծանր մասնակցում էի: Մարդիկ կային, որոնք եկել էին Չամշենից հատուկ դրան մասնակցելու համար: Ավելին ասեմ. սպանության

գիշերը եւ հաջորդ օրերին բողոքի ակցիայի հիմնական կազմակերպիչներից երեքը համշենցիներ էին: Նշեմ նաեւ, որ համշենցիներն ընդհանրապես քաղաքականացված մարդիկ են, դեմ՝ ամեն տեսակի անարդարության, եւ նրանց մեծ մասն ընդդիմադիր է:

–Չայտնի է նաեւ, որ որոշ համշենցիներ զբաղեցրել են բարձր պաշտոններ Թուրքիայի Չանրապետությունում, օրինակ՝ նախկին վարչապետ Մեսութ Յըլմազը, Մուրադ Քարայալչընը եւ այլն:

–Այո, կան պաշտոնյաներ, բայց, օրինակ, բարձրաստիճան գինվորականների մեջ համշենցիներ չկան:

–Ինչի՞ հետ է սա կապված:

–Չայտնի է, որ գինվորական համակարգ մտնել ցանկացողի կենսագրությունը մանրակրիտ ուսումնասիրվում է:

–Այսինքն՝ ուզում ես ասել, որ այդ մանրակրկիտ ուսումնասիրությունները պարզում են, որ համշենցիներն ունեն հայկական ծագում եւ այդ պատճառով չեն ընդունվում գինվորական համակարգ:

–Այո:

–Եվ վերջում. ի՞նչ ես մտածում հայաստանցի հայերի եւ համշենահայերի հարաբերությունների մասին:

–Ես կարծում եմ, որ պետք է սերտացնել մշակութային կապերը, միգրացիոն ընդհանուր ծրագրեր կազմակերպել: Օրինակ՝ հայկական մշակույթը, բանահյուսական նյութերը, լեզուն մեծ ազդեցություն են ունենում համշենցիների վրա՝ կապված նաեւ քո նշած ազգային ինքնագիտակցության հետ: Այդ ամենը՝ ժողովրդական երգերը, տոները, լեզուն եւ այլն, պարզորոշ ցույց են տալիս հայերի եւ համշենցիների մանությունը, ընդհանրությունը...

Ջրույցը վարեց
Ռուբեն Մելքոնյանը

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տեր-Յարությունյան ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԼՈՐԱԼԱՑՈՒՄ	1
Սարգիս Յարությունյան ՔԵՆԵԲԱՆԿՊՈՐՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ	5
Դավիթ Հովհաննիսյան ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ	11
Վահագն Ազլյան ԱՄԵՐԻԿՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ	16
Արաքս Փաշայան ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ	21
Լիլիթ Յարությունյան ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ	27
Հանս Բլիքս «ՄԻԱՅՆ ՈՒԺՈՎ ԽՆԴԻՐՆԵՐ ՉԵՆ ԼՈՒԾՎՈՒՄ»	32
 ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ	38
Քայել Մարգարոյլու. «ԿԱՆ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ԲԱՑԱՀԱՅՑ ՀԱՅ ԵՆ ՀԱՄԱՐՈՒՄ»	43

*Շապիկի վրա պատկերված է
տեսարան **Ձեյթունից***

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: